



C-Quadrat Ampega
Asset Management
Armenia

Պայմանագրային ֆոնդի կանոնների փոփոխության տիտղոսաթերթ

Պայմանագրային ֆոնդի ՀՎՀՀ 02813374

09.01.2024թ. թիվ 7 Ա որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան

(ստորագրություն)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության դիտորդ խորհրդի
(իրավասու մարմնի անվանումը)

18/12/2019թ թիվ 42 որոշմամբ

Փոփոխված է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ
Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության դիտորդ
խորհրդի

04/05/2022 թվականի թիվ 58 որոշմամբ և 05/12/2023
թվականի թիվ 65 որոշմամբ

(իրավասու մարմնի անվանում)
Դիտորդ խորհրդի նախագահ
(իրավասու անձի պաշտոնը)

Էռնստ Լյուդվիգ Դրայսս

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆՆԵՐ

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության «Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդ (նոր խմբագրություն)

Կառավարչի և պայմանագրային ֆոնդի լրիվ անվանումը
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
ԳԼՈՒԽ I. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
ԳԼՈՒԽ II. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	7
ԳԼՈՒԽ III. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	8
ԳԼՈՒԽ IV. ՓԱՅԵՐԸ, ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓԱՅԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	16
ԳԼՈՒԽ V. ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ	19
ԳԼՈՒԽ VI. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ.....	32
ԳԼՈՒԽ VII. ՓԱՅԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ (ՀԵՏԳՆՈՒՄԸ) ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ.....	33
ԳԼՈՒԽ VIII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ԶԵՌՔԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	34
ԳԼՈՒԽ IX. ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ.....	35
ԳԼՈՒԽ X. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՈՒՄԸ	35
ԳԼՈՒԽ XI. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	36
ԳԼՈՒԽ XII. ՊԱՏՎԻՐԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	37
ԳԼՈՒԽ XIII. ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	39
ԳԼՈՒԽ XIV. ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ.....	39
ԳԼՈՒԽ XV. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ	40
ԳԼՈՒԽ XVI. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ	41
ԳԼՈՒԽ XVII. ՖՈՆԴԻ ՀԱՐԿՈՒՄԸ	41
ԳԼՈՒԽ XVIII. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	42
ԳԼՈՒԽ XIX. ՖՈՆԴԻ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ	42
ԳԼՈՒԽ XX. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	43
ԳԼՈՒԽ XXI. ՊԱՀԱՌՈՒԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	44
ԳԼՈՒԽ XXII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ	44
ԳԼՈՒԽ XXIII. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ.....	45

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն փաստաթուղթը սահմանում է «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության «Յե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդի կանոնները (այսուհետ՝ Կանոններ) և միաժամանակ հանդիսանում է ազդագիր և պայմանագիր ֆոնդի մասնակիցների համար:

Կանոնները նպատակ ունեն տրամադրել կարևոր տեղեկատվություն «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության «Յե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդի (այսուհետ՝ Ֆոնդ), դրա ներդրումային քաղաքականության, Ֆոնդի մասնակիցներին առաջարկվող փայերի մասին:

Կանոնները հաստատվել են «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ Դիպորդ խորհրդի կողմից:

Կանոնները սահմանում են Ֆոնդի գործունեության և Ֆոնդի մասնակիցների ու Ֆոնդի կառավարչի հարաբերությունների հիմնական դրույթները: Կանոնները մշակվել են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: Կանոնների և օրենսդրության դրույթների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում ՀՀ օրենսդրության դրույթները: Կանոնների տարբեր դրույթների միջև անհամապատասխանության կամ դրանց թերի լինելու դեպքում նման դրույթները մեկնաբանվում են՝ ելնելով Ֆոնդի մասնակիցների լավագույն շահերից:

Կանոններն ուժի մեջ են մտնում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

**Ֆոնդի
անվանումը**

Լրիվ անվանումն է՝

«Յե-Կվադրատ Ամպեգա
Ասեթ Մենեջմենթ
Արմենիա»
Սահմանափակ
Պատասխանատվությամբ
Ընկերության «Յե-Քյու
Արմենիա Գրուպ»
ներդրումային ֆոնդ

Կրճատ անվանումն է՝

«Յե- Քյու Արմենիա
Գրուպ» ֆոնդ

Անգլերեն լրիվ
անվանումն է՝

“C-QUADRAT Ampega
Asset Management
Armenia” Limited Liability
Company’s “CQ Armenia
Growth” Investment Fund

Անգլերեն կրճատ անվանումն է

“CQ Armenia Growth”
Fund

**Ֆոնդի
նկարագրությունը**

Ֆոնդը հրապարակային, բաց, ստանդարտ, պայմանագրային ներդրումային ֆոնդ է ՀՀ գործող օրենսդրության իմաստով

**Ֆոնդի
կառավարիչը
(այսուհետ՝
Կառավարիչ)**

«Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ
գրանցման համար՝ 3,
Կառավարչի գտնվելու վայրն է՝
ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փ. 37, 4-րդ հարկ

**Ֆոնդի
ակտիվների
պահառուն
(այսուհետ՝
Պահառու)**

«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ
գրանցման համար՝ 1,
Պահառուի գտնվելու վայրն է՝
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ

**Ֆոնդի
մասնակիցների
ոեեստրը վարողը
և Ֆոնդի փայերի
թողարկում և
մարում
իրականացնող
անձը
(այսուհետ՝
Ռեեստրավար)**

«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ
գրանցման համար՝ 1:
Ռեեստրավարի գտնվելու վայրն է՝
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, 5-րդ հարկ

**Ֆոնդի զուտ
ակտիվների
հաշվարկն
իրականացնողը**

«Ռայֆայզն Բանկ Ինթերնեյշնլ ԱԳ»
Ավստրիա, ք. Վիեննա, Ամ Ստրադթայարկ 9

Ֆոնդի ստեղծումը «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի Դիտորդ խորհրդի թիվ 40/2 որոշման հիման վրա: Ֆոնդը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում

Ֆոնդի գտնվելու վայրը Կառավարչի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության փ. 37, 4-րդ հարկ

ԳԼՈՒԽ I. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ֆոնդի կանոններում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
 - **Կանոններ**՝ «Ցե-Քյու Արմենիա Գրոութ» ներդրումային ֆոնդի կանոններ:
 - **Աշխատանքային օր**՝ ցանկացած օր, որը չի հանդիսանում շաբաթ կամ կիրակի օր կամ «Տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով տոնի կամ հիշատակի օր կամ ոչ աշխատանքային օր Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի համար,
 - **Արժեթղթերի հաշիվ**՝ ըստ Ռեեստրավարի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»-ի,
 - **Գնահատման օր**՝ այն օրը, որի համար հաշվարկվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը,
 - **Էական Իրադարձություններ**՝ իրադարձություններ, որոնք կարող են ազդել Կառավարչի կողմից իր՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա և ներառում, բայց չեն սահմանափակում հետևյալ դեպքերից մեկը կամ մի քանիսը. (ա) շուկայի խափանումներ, այդ թվում՝ կարգավորվող շուկաների (բորսաների) չկանխատեսված փակումներ կամ աշխատանքի չպլանավորված ընդհատումներ, կարգավորվող շուկաների, բորսաների, բանկային համակարգի, վճարահաշվարկային համակարգի բնականոն աշխատանքի խափանումներ (այդ թվում նաև՝ տեխնիկական), (բ) անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով առաջացած դեպքերը: Էական Իրադարձության առկայությունը կամ բացակայությունը որոշվում է Կառավարչի կողմից,
 - **Թողարկման վճար**՝ փայի թողարկման համար գանձվող վճարն է,
 - **Կանոնակարգ 8/03**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների եվ ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03,
 - **Կանոնակարգ 10/04**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04,

- Կանոնակարգ 10/32՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների կողմերը և ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները, որոնցում կարող են ներդրվել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվները» կանոնակարգ 10/32,
- **Կառավարչի պարզևավճար՝** Ֆոնդի ակտիվների կառավարման ծառայության մատուցման դիմաց Կառավարչին վճարվող պարզևավճար,
- **ԿԲ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
- **Կոնտրազենտ՝** Ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող գործարքների շրջանակում Կառավարչից բացի գործարքի կողմ հանդիսացող անձ,
- **Կտրման պահ՝** Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Գնահատման օրվա UTC+4 ժամային գոտու ժամը 23:59-ը,
- **Կշմանը մասնակցող ծախսեր՝** դրամական հոսքեր, որոնք ներառում են, բայց չեն սահմանափակում հետևյալ ցանկը՝ Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտի վճարը և կանխավճարը, Ֆոնդի շահութահարկի գումարը և կանխավճարը, արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցման գծով վճարները:
- **Հաշվարկման օր՝** այն օրը, երբ հաշվարկվում և հրապարակվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը,
- **Հաշվի օպերատոր՝** ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ի,
- **Ձեռքբերման հայտ՝** Ռեեստրավարի «Ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման կանոններով» սահմանված Ֆոնդի փայերի տեղաբաշխման/բաժանորդագրման հայտ,
- **Մասնակից՝** Ֆոնդի փայերի սեփականատեր,
- **Մարման գին՝** Կանոնների 105-րդ կետում նշված փայի հետգնման գինն է,
- **Մարման հայտ՝** Ռեեստրավարի «Ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման կանոններով» սահմանված Ֆոնդի փայերի մարման հայտ,
- **Մարման վճար՝** փայի մարման համար գանձվող վճարն է,
- **Մարման ենթակա գումար՝** մարման պահանջի մեծություն մինչև Մարման վճարի նվազեցնելը: **Պահառուի պարզևավճար՝** Ֆոնդի ակտիվների պահառության ծառայության մատուցման դիմաց Պահառուին վճարվող պարզևավճար,

- **Ռեեստր՝** Ֆոնդի Մասնակիցների ռեեստր,
- **Ռեեստրավարի Ծրագրային համակարգ՝** Ռեեստրավարի գործառույթների իրականացումն ապահովող համակարգչային ծրագրերի ամբողջություն,
- **Ռեեստրավարի պարզևավճար՝** Ֆոնդի Մասնակիցների ռեեստրի վարման ծառայության մատուցման դիմաց Ռեեստրավարին վճարվող պարզևավճար,
- **Վճարման ենթակա գումար՝** Մարման ենթակա գումարի և Մարման վճարի տարբերությունը:
- **Տեղաբաշխման գին՝** Կանոնների 98-րդ կետում նշված փայի տեղաբաշխման գինն է,
- **Փայի հաշվարկային արժեք՝** Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի և Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկված և չմարված փայերի քանակի հարաբերությունն է,
- **Ֆոնդ՝** «Յե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության «Յե-Քյու Արմենիա Գրուպ» ներդրումային ֆոնդ,
- **Ֆոնդի զուտ ակտիվների արժեք՝** Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների հանրագումարի և Ֆոնդի ստանձնած պարտավորությունների արժեքի տարբերությունն է,
- **Ֆոնդի փայ՝** անվանական ներդրումային արժեթուղթ, որը հավաստում է իր տիրապետողի՝ Ֆոնդի ակտիվներում փայամասնակցության իրավունքը:

2. Կանոններում օգտագործվող այլ հասկացություններն ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ներդրումային ֆոնդերի մասին», «Արժեթղթերի շուկային մասին» ՀՀ օրենքներով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իմաստները, եթե այլ բան սահմանված չէ Կանոններով և/կամ Կանոնների դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

ԳԼՈՒԽ II. ՖՈՆԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Ֆոնդը փայերի հրապարակային առաջարկի միջոցով հավաքագրված դրամական միջոցների և դրանց ներդրմամբ ձեռքբերված ակտիվների համախումբ է, որը կառավարվում է Կառավարչի կողմից և հանդիսանում է Մասնակիցների ընդհանուր սեփականությունը:

4. Ֆոնդի գործունեության և Մասնակիցների ու Կառավարչի փոխհարաբերությունների հիմքերը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ԿԲ նորմատիվ իրավական ակտերով և Կանոններով:

5. Ֆոնդի հիմնական նպատակը կապիտալի երկաժամկետ աճի ապահովումն է:

6. Կառավարչի՝ Կանոններով նախատեսված պարտավորությունների կատարման վրա կարող են ազդել Էական Իրադարձություններ: Վերջիններիս ի հայտ գալու դեպքում Կառավարիչը պատասխանատվություն չի կրելու այն խախտումների համար, որոնք ի հայտ են եկել այդպիսի Էական Իրադարձությունների հետևանքով, եթե Կառավարիչը գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում:

ԳԼՈՒԽ III. ՖՈՆՂԻ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7. Ֆոնդի ներդրումային գործունեությունը հիմնված է ակտիվների ապահովության և եկամտաբերության, ռիսկերի դիվերսիֆիկացիայի և համարժեք իրացվելիության ապահովման սկզբունքների վրա, որին Կառավարիչը հասնում է տարբեր ֆինանսական գործիքներում ներդրում կատարելու միջոցով:

8. Կառավարիչը Ֆոնդի Մասնակիցներին չի երաշխավորում ներդրումային եկամուտ, ինչպես նաև՝ պաշտպանություն կապիտալի արժեքի նվազումից:

9. Ֆոնդի ներդրումային քաղաքականության հիմնական սկզբունքն է՝ ապահովել Ֆոնդի ակտիվների արժեքի երկարաժամկետ աճ Ֆոնդի ակտիվների մինչև 25%-ը ներդնելով բաժնետոմսերում, բաժնային արժեթղթերի ֆոնդերում և նմանատիպ այլ գործիքներում: Ակտիվների մնացած մասը ներդրվում է պարտքային գործիքներում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այնպիսի ներդրումային ֆոնդերում, որոնց ակտիվները ներդրվում են սույն կետում նշված արժեթղթերում և ավանդներում:

10. Ֆոնդի ակտիվների հստակ տեղաբաշխումը ըստ տարբեր ակտիվների և ներդրումային նպատակների որոշվում է Ֆոնդի կառավարչի ընթացիկ կառավարչական գործառույթների միջոցով: Ֆոնդի ակտիվներով ներդրումներ կատարելիս Կառավարիչը որոշումներ է կայացնում ըստ տարբեր ակտիվների տեսակների, դասերի, թողարկողների, ռեգիոնալ կամ ճյուղային առանձնահատկությունների՝ մնալով օրենքով և Կանոններով սահմանված Ֆոնդի ներդրումային սահմանափակումների և հիմնարար սկզբունքների շրջանակում: Ֆոնդի ակտիվները ներդրվում են՝ Ֆոնդի գործարար նպատակներից և Մասնակիցների շահերից, միջազգային լավագույն փորձից և օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներից ելնելով:

11. Կառավարիչը Ֆոնդի ակտիվները ներդնում է օրենսդրությամբ և Կանոններով սահմանված սահմանափակումներին համապատասխան: Կառավարիչը Ֆոնդի ակտիվները կարող է ներդնել ՀՀ-ում և արտասահմանում՝ Կանոնների 12-13-րդ կետերում նշված սահմանափակումների ներքո:

12. ՀՀ տարածքում Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝
- 1) բանկային հաշիվներում և ցպահանջ և մինչև 1 տարի ժամկետայնության ավանդներում, եթե տվյալ բանկը անվճարունակության (սնանկության) գործընթացում չէ,
 - 2) ՀՀ կամ ԿԲ թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,

3) ՀՀ-ում գործող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում կամ նոր թողարկված այնպիսի արժեթղթերում, որոնց համար թողարկման և/կամ առաջարկի պայմաններով նախատեսված է կարգավորվող շուկաներում առևտրի թույլտվություն ստանալը դրանց թողարկմանը հաջորդող 12 ամիսների ընթացքում,

4) այն բաց ստանդարտ ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում, որոնք վերահսկվում են ԿԲ կողմից,

5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ընդ որում, հեջավորման նպատակով ածանցյալ ֆինանսական գործիքում ներդրումները իրականացվում են Կանոնակարգ 10/32-ով սահմանված պայմաններով և կարգով:

13. Արտասահմանում Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել՝

1) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) կամ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) անդամ պետությունների բանկային համակարգը վերահսկող լիազորված մարմնի կողմից արտոնագրված և վերահսկվող ֆինանսական կազմակերպությունների ցպահանջ և մինչև 1 տարի ժամկետայնության ավանդներում և բանկային հաշիվներում, ընդ որում, Ֆոնդի ակտիվները որպես ավանդ կարող են ներդրվել միայն այնպիսի օտարերկրյա բանկում, որն ունի առնվազն Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ», Մուդիզի «Բաա» խմբի՝ «Բաա3» կամ Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ «ԲԲԲ» վարկանիշ,

2) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների¹ ԿԲ թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորած արժեթղթերում,

3) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթերում,

4) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կապիտալի շուկան վերահսկող լիազորված մարմնի կողմից գրանցված և վերահսկվող բաց ներդրումային ֆոնդերի փայերում (բաժնետոմսերում),

5) ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ընդ որում, հեջավորման նպատակով ածանցյալ ֆինանսական գործիքում ներդրումները իրականացվում են Կանոնակարգ 10/32-ով սահմանված պայմաններով և կարգով:

14. Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Կանոնների 12-13-րդ կետերում չնախատեսված արժեթղթերում և ածանցյալ ֆինանսական գործիքներում, եթե դրանց ընդհանուր արժեքը չի գերազանցում Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսը:

15. Ֆոնդի ակտիվները ներդրվում են հետևյալ սահմանափակումների ներքո՝

¹ ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների, ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունները պետք է ընդգրկված լինեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 1-ում նշված պետությունների ցանկում:

- 1) Ֆոնդի՝ արտասահմանյան արժույթով ներդրումների առավելագույն չափը չպետք է գերազանցի Ֆոնդի ընդհանուր ակտիվների 40 տոկոսը: Ընդ որում, ոչ փոխարկելի արտասահմանյան արժույթով կատարվող ներդրումների առավելագույն չափը չպետք է գերազանցի Ֆոնդի ընդհանուր ակտիվների 3 տոկոսը,
- 2) Բանկային հաշիվներում և ավանդներում (այդ թվում՝ բանկում միջոցների ավանդագրումը հավաստող արժեթղթերում) (այսուհետ՝ բանկային ավանդ) կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը,
- 3) Մեկ բանկում, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխկապակցված ճանաչված բանկերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը:
- 4) ՀՀ, ՀՀ համայնքերի, ԿԲ թողարկած կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը,
- 5) ՏՀԶԿ կամ ԵՄ անդամ պետությունների կամ այդ պետությունների կենտրոնական բանկերի կողմից թողարկված կամ ամբողջությամբ երաշխավորված արժեթղթերում կատարվող ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 40 տոկոսը, ընդ որում, մեկ թողարկումում (տրանշում) ներդրումների արժեքը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 20 տոկոսը,
- 6) Սույն կետի 4) և 5) մասերով նախատեսված արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 80 տոկոսը,
- 7) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արժեթղթավորման հիմնադրամների թողարկած արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 5 տոկոսը,
- 8) Մեկ թողարկողի թողարկած արժեթղթերում ներդրումների ընդհանուր ծավալը կարող է հասնել Ֆոնդի ակտիվների 25 տոկոսի, եթե այդ արժեթղթերը ապահովված պարտատոմսեր են, մասնավորապես, դրանք բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքի համաձայն թողարկված ապահովված հիփոթեքային պարտատոմսեր են, ինչպես նաև՝ օտարերկրյա բանկերի թողարկած պարտքային արժեթղթեր, որոնց տեղաբաշխումից ստացված միջոցները ներդրվում են այնպիսի ակտիվներում, որոնք՝
 - ա) այդ պարտքային արժեթղթերի վավերականության ամբողջ ժամանակահատվածի համար բավարար ապահովություն (ծածկույթ) են հանդիսանում դրանց գծով ամրագրված պարտավորությունների կատարման համար, և

բ) թողարկող բանկի անվճարունակության կամ սնանկության դեպքում առաջնահերթորեն օգտագործվում են այդ պարտքային արժեթղթերի գծով պարտավորությունների կատարման (արժեթղթի մայր գումարի (անվանական արժեքի) և հաշվեգրված տոկոսների փոխհատուցման) համար,

9) Ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չպետք է գերազանցեն Ֆոնդի ակտիվների 50 տոկոսը: Ընդ որում, ներդրումային ֆոնդերի թողարկած արժեթղթերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 10 տոկոսը, եթե դրանք՝

ա) ՀՀ-ում գրանցված ֆոնդերի դեպքում բաց, հրապարակային, ստանդարտ, տարատեսականացված ներդրումային ֆոնդեր չեն,

բ) արտասահմանյան պետությունում գրանցված ֆոնդերի դեպքում բաց և հրապարակային ներդրումային ֆոնդեր չեն, որոնց կանոնների (կանոնադրության) համաձայն՝ ներդրումային ֆոնդի ակտիվների առնվազն 90 տոկոսը պետք է ներդրվի միայն բանկային ավանդներում, պետական պարտատոմսերում, կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ թույլատրվող արժեթղթերում կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ իրացվելի ակտիվներում,

10) Միևնույն կառավարչի կողմից կառավարվող ներդրումային ֆոնդերում կամ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կառավարիչների ներդրումային ֆոնդերում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 25 տոկոսը,

11) Մեկ թողարկողի արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 10 տոկոսը, իսկ փոխկապակցված թողարկողների արժեթղթերում ներդրումների առավելագույն չափը չի կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 15 տոկոսը,

12) Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

ա) մեկ թողարկողի ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 10 և ավելի տոկոսում,

բ) մեկ թողարկողի ձայնի իրավունք չտվող բաժնային արժեթղթերի ավելի քան 10 տոկոսում,

գ) մեկ թողարկողի թողարկած պարտքային արժեթղթերի ավելի քան 40 տոկոսում,

դ) այլ ֆոնդի փայերի կամ բաժնետոմսերի ավելի քան 25 տոկոսում:

Ընդ որում, սույն մասը չի կիրառվում սույն կետի 4-5-րդ մասերով նախատեսված արժեթղթերի նկատմամբ:

16. Կառավարիչը կարող է Ֆոնդի անունից ներգրավել փոխառու միջոցներ մինչև Ֆոնդի ակտիվների 10%-ի չափով: Ներգրավված յուրաքանչյուր փոխառության (վարկի) ժամկետը չի կարող գերազանցել 3 ամիսը:

17. Մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումները չեն կարող գերազանցել Ֆոնդի ակտիվների 15 տոկոսը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ֆոնդի ակտիվներում ընդգրկված ներդրումային գործիքների դեպքում հնարավոր չէ հստակ որոշել որևէ կոնկրետ պետության մասնակցության աստիճանը:

18. Ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (այդ թվում՝ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 30 տոկոսը:

19. Ֆոնդի ակտիվներում ընդգրկված մեկ անձի թողարկած արժեթղթերի (բացառությամբ ապահովված պարտատոմսերի), տվյալ անձի մոտ ներդրված բանկային ավանդների և տվյալ անձի հետ կնքված ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի տվյալ Ֆոնդի ակտիվների ընդհանուր արժեքի 20 տոկոսը:

20. Մեկ անձի հետ ածանցյալ գործիքով կնքված գործարքի չափը չի կարող գերազանցել ֆոնդի ակտիվների արժեքի 10 տոկոսը, եթե գործարքի կողմը բանկ է, կամ գործարքը կնքվել է կարգավորվող շուկայում, և չի կարող գերազանցել 5 տոկոսը մնացած այլ դեպքերում: Ֆոնդի ակտիվներում ներառված բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը:

21. Ֆոնդի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակային և արժույթային սահմանափակումների հաշվարկման համար հիմք է ընդունվում ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքը:

22. Ֆոնդի ակտիվներում այս և այլ ներդրումային սահմանափակումները սահմանվում են՝ համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ԿԲ կողմից ընդունված իրավական ակտերի:

23. Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել Ֆոնդի Կառավարչի և Պահառուի, նրանց ղեկավարների, ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի և անկախ աուդիտի իրականացնող անձի, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված անձանց թողարկած, պատկանող և (կամ) նրանց կողմից վաճառվող արժեթղթերում կամ այլ ակտիվներում կամ ածանցյալ ֆինանսական գործիքներում, որոնց կողմ են նրանք հանդիսանում՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ (յուրաքանչյուր ներդրման դեպքի համար):

Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը չի պահանջվում այն դեպքերում, երբ Ֆոնդի ակտիվների հաշվին այդ արժեթղթերը ձեռք են բերվել կարգավորվող շուկայում իրականացված գործարքի արդյունքում:

Ընդ որում, սույն կետի 1-ին մասը չի տարածվում Ֆոնդի Կառավարչի (կամ վերջինիս հետ փոխկապակցված անձի) կողմից կառավարվող այլ Ֆոնդի փայերում (բաժնետոմսերում) ներդնելու դեպքի վրա, եթե առկա են հետևյալ բոլոր պայմանները.

ա. տվյալ Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը չի հակասում Ֆոնդի ներդրումային նպատակներին,

բ. դրա համար չեն գանձվում փայերի (բաժնետոմսերի) մարման և տեղաբաշխման վճարներ,

գ. Կառավարչի կողմից կառավարվող Ֆոնդի ակտիվներն իր կողմից կառավարվող մեկ այլ Ֆոնդում ներդնելու դեպքում նույն ակտիվները տարբեր Ֆոնդերում ներդնելով՝ դրանցից չեն գանձվում կրկնակի պարգևավճարներ,

դ. տվյալ Ֆոնդի կանոններով նման հնարավորություն նախատեսված է:

24. Ֆոնդի ակտիվները չեն կարող ներդրվել՝

1) Ֆոնդի Կառավարչի կամ Պահառուի աուդիտն իրականացնող անձի թողարկած արժեթղթերում,

2) Ֆոնդի Կառավարչին կամ Պահառուին խորհրդատվական ծառայություններ մատուցող անձանց թողարկած արժեթղթերում,

3) անշարժ գույքում կամ այլ ֆիզիկական ակտիվներում (արվեստի գործեր, հուշադրամներ, սրբապատկերներ, հնաոճ ապրանքներ, թանկարժեք մեքենաներ և այլն),

4) այն ակտիվներում, որոնց օտարումն արգելված կամ սահմանափակված է:

25. Նշված սահմանափակումները առավելագույն թույլատրելի սահմանաչափերն են: Ֆոնդի ակտիվների փաստացի ներդրումը այդ առավելագույն սահմանաչափերի ներքո կատարվում է՝ հաշվի առնելով Մասնակիցների լավագույն շահերը և Ֆոնդի ակտիվների ներդրման սկզբունքները:

26. Կանոններով նախատեսված քանակային և արժույթային սահմանափակումները տարածվում են Ֆոնդի վրա՝ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը երկու միլիարդ ՀՀ դրամը գերազանցելու դեպքում, և եթե առաջին ներդրումային հատկացումը Ֆոնդին կատարելու օրվանից անցել է 6 ամիս:

27. Ֆոնդի ներդրումներն ուղեկցվում են մի շարք ռիսկերով, որոնք կարող են ազդել Ֆոնդի եկամտաբերության և փայի հաշվարկային արժեքի վրա: Մասնավորապես, ներդրումային ռիսկերի ցանկը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

1) Շուկայական ռիսկ՝ արժեթղթերի կամ այլ ակտիվների շուկայական գների կամ տոկոսադրույքների փոփոխության արդյունքում ակտիվի արժեքի փոփոխության ռիսկ:

Շուկայական ռիսկի տեսակներ են՝

- Տոկոսադրույքի ռիսկ՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում ակտիվի արժեքի փոփոխության ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկի

տարատեսակներ են՝ վերագնահատման ռիսկը, բազային ռիսկը, եկամտաբերության կորի ռիսկը և օպցիոնի ռիսկը,

- Գնային ռիսկ՝ այս ռիսկը կապված է ակտիվի գնի տատանողականության հետ: Գնային ռիսկը արտահայտվում է տվյալ գործիքի գնի փոփոխության և ընդհանուր շուկայական գների փոփոխության կախվածությունով,
- Արտարժույթային ռիսկ՝ առաջանում է արտարժույթային ակտիվների և պարտավորությունների տարբերության կամ ոչ ամբողջությամբ հեջավորված արտարժույթային ակտիվների և պարտավորությունների տարբերության տեղական արժույթով վերագնահատման արդյունքում՝ կապված տեղական արժույթի՝ արտարժույթով արտահայտված գնի փոփոխության հետ:

Շուկայական ռիսկը մեղմելու նպատակով ձեռք է բերվում բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնցում ներդրվել կամ ներդրվում են Ֆոնդի ակտիվները, դիվերսիֆիկացվում են Ֆոնդի ներդրումները, ինչպես նաև կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ,

2) Վարկային ռիսկ՝ Ֆոնդի ակտիվներում ընդգրկված արժեթղթի թողարկողի, կոնտրագենտի կամ գործարքի մյուս կողմի՝ իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի չկատարելու կամ պայմանագրի (արժեթղթի շրջանառության մեջ լինելու) ընթացքում արժեթղթի թողարկողի, կոնտրագենտի կամ պայմանագրի մյուս կողմի դեֆոլտի, վարկունակության իջեցման, վարկանշի անկման, անբարենպաստ հանգամանքների ի հայտ գալու, սնանկության ռիսկի մեծացման արդյունքում ֆինանսական կորուստների առաջացման ռիսկն է (օրինակ՝ իր թողարկած պարտատոմսերը ժամանակին մարելու թողարկողի անկարողությունը):

Վարկային ռիսկի տեսակներն են.

- Դեֆոլտի ռիսկ՝ արժեթղթի թողարկողի, կոնտրագենտի կամ գործարքի մյուս կողմի՝ իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի չկատարելու ռիսկ,
- Սնանկության ռիսկ,
- Վարկունակության իջեցման ռիսկ,
- Հաշվարկային ռիսկ՝ արժեթղթերի, ակտիվների և/կամ դրամական հոսքերի փոխանակման արդյունքում առաջացող ռիսկ կապված՝ հաշվարկային համակարգում գործարքի մյուս կողմի իր պարտավորությունները ժամանակին կամ ամբողջությամբ չկատարելու հետ: Հաշվարկային ռիսկը նվազեցնելու նպատակով գործարքները հիմնականում իրականացվում են Կարգավորվող շուկաներում, որտեղ գործում է «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքը:

Վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով Ֆոնդի ներդրումները դիվերսիֆիկացվում են, ինչպես նաև կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ,

- 3) Իրացվելիության ռիսկ՝ Ֆոնդի ակտիվները ժամանակին և սահմանված արդարացի գնով իրացնելու կամ պարտավորությունները ժամանակին և պատշաճ կատարելու անհնարինության ռիսկն է: Իրացվելիության ռիսկ է համարվում նաև գերիրացվելիության ռիսկը: Իրացվելիության ռիսկը զսպելու նպատակով Ֆոնդի ակտիվների մի մասը կարող է ներդրվել բարձր որակի իրացվելի ակտիվներում, կարճաժամկետ պարտքային արժեթղթերում և/կամ բանկային հաշիվներում: Որպես իրացվելիության ռիսկի զսպման հավելյալ գործիքներ կարող են օգտագործվել ածանցյալ գործիքներ, ռեպո համաձայնագրեր, պայմանական ակտիվներ և իրացվելիության ներգրավման այլ միջոցները,
- 4) Պահառուի ռիսկ՝ Պահառուի անվճարունակության, սնանկացման, անգործության կամ դիտավորյալ գործողությունների հետևանքով իր կողմից ի պահ ընդունված ակտիվների կորստի կամ ոչնչացման ռիսկն է,
- 5) Գնաճի ռիսկ՝ գնաճի պատճառով ներդրումների իրական արժեքի նվազման ռիսկն է: Գնաճի ռիսկը կառավարելու նպատակով Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ինդեքսավորվող գործիքներում,
- 6) Երկրի ռիսկ՝ ներդրումների արժեքի վրա հնարավոր զգալի ազդեցություն ունեցող անբարենպաստ քաղաքական, տնտեսական, արժույթային, տեխնոլոգիական զարգացումների կամ իրադարձությունների ի հայտ գալու ռիսկն է այն երկրներում, որտեղ ներդրվում են Ֆոնդի ակտիվները,
- 7) Իրավական, վերահսկողական և համապատասխանության ռիսկ՝ Ֆոնդի գործունեության բնագավառում օրենսդրության փոփոխության (մասնավորապես՝ ներդրումային ֆոնդերը և արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության, ինչպես նաև հարկային օրենսդրության փոփոխությունների) իրավական և դատական դեպքերի ի հայտ գալու ռիսկն է,

28. Գործառնական ռիսկ՝ Ֆոնդի կառավարման գործընթացներում հնարավոր կորստի ռիսկն է՝ պայմանավորված ներքին գործընթացների ոչ համարժեքությամբ, ծրագրային և տեխնիկական համակարգերի խափանմամբ, մարդկային գործոնով կամ արտաքին ազդեցություններով: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով, անընդհատ մոնիթորինգի են ենթարկվում ներքին գործընթացները, հնարավորինս ավտոմատացվում են ռիսկային գործառույթները, ինչպես նաև օգտագործվում են պահուստային տեխնիկական և ծրագրային համակարգերի հնարավորությունները, տեղեկատվությունը պարբերաբար պատճենվում է և պահվում առանձին վայրում, ցանկացած պահին այն վերականգնելու նպատակով, ըստ անհրաժեշտության կիրառվում է երկու անձի կողմից կարևոր գործառույթների կրկնակի իրականացում, կամ ստուգումների և հաստատումների տարբերակը: Ֆոնդի Կառավարիչը ձգտելու է խուսափել այնպիսի իրավիճակներից, որտեղ Կառավարիչը և Մասնակիցները շահերի բախման մեջ կհայտնվեն: Այնուամենայնիվ, եթե նման իրավիճակներ ի հայտ գան, Կառավարիչը առաջնահերթությունը տալու է Մասնակիցների շահերին:

29. Ֆոնդի ներդրումային քաղաքականության իրականացման հետ կապված ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգվում է Կառավարչի ներքին ընթացակարգերով:

ԳԼՈՒԽ IV. ՓԱՅԵՐԸ, ՓԱՅԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓԱՅԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

30. Ֆոնդի փայլը անվանական ներդրումային արժեթուղթ է, որը հավաստում է իր տիրապետողի՝ Ֆոնդի ակտիվներում փայամասնակցության իրավունքը:

31. Փայլը համապատասխանում է Մասնակցի՝ Ֆոնդի ակտիվներում ունեցած բաժնեմասին: Փայլը չի կարող միաժամանակ պատկանել մի քանի անձանց:

32. Փայլը էլեկտրոնային գրանցում ունեցող արժեթուղթ է: Փայերը հաշվառվում են գրանցման ձևով և որևէ փայի հավաստագիր չի թողարկվում (փայերը ոչ թղթային են):

33. Փայլը չունի անվանական արժեք: Ֆոնդի առաջին փայլը տեղաբաշխելիս յուրաքանչյուր դասի փայի հաշվարկային արժեքը 1000 ՀՀ դրամ է:

34. Փայլը բաժանելի է: Փայերի բաժանումից առաջացող կոտորակային մասերը կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ:

35. Փայլը Մասնակցին Ֆոնդի ակտիվներով իրականացվող գործարքների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավունք չի տրամադրում:

36. Մասնակիցների ընդհանուր ժողով չի գումարվում: Մասնակիցը չի կարող պահանջել Ֆոնդի ակտիվներից իր մասնաբաժնի առանձնացում:

37. Ֆոնդի Մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև՝ ԿԲ կողմից լիցենզավորված կառավարիչ ունեցող ներդրումային ֆոնդերը:

38. Պահառուն, Ռեեստրավարը, Ֆոնդի անկախ աուդիտն իրականացնող անձն և նրանց հետ փոխկապակցված անձինք չեն կարող հանդիսանալ Ֆոնդի Մասնակից:

39. Ֆոնդն ունի փայի երկու դաս.

- 1) **A դաս**՝ նախատեսված է ԿԲ կողմից լիցենզավորված կառավարիչ ունեցող ներդրումային ֆոնդերի, ինչպես նաև՝ օտարերկրյա կարգավորող մարմնի կողմից գրանցված և լիցենզավորված կառավարիչ ունեցող օտարերկրյա ներդրումային ֆոնդերի համար,
- 2) **B դաս**՝ նախատեսված է ֆիզիկական և իրավաբանական անձ ներդրողների համար,

Դաս	Նվազագույն սկզբնական ներդրում	Թողարկման վճար	Մարման վճար	Կառավարչի պարգևավճար
A	250 մլն ՀՀ դրամ (բացառությամբ՝ Կառավարչի, որի կողմից իրականացվող համաֆինանսավորման համար որպես սկզբնական նվազագույն չափ է սահմանվում 25 մլն ՀՀ դրամ)	0%	Մինչև 10մլն ՀՀ դրամ՝ 0%, 10մլն ՀՀ դրամը գերազանցող մասի դեպքում՝ •մինչև 730 օրը՝ 2% •731 օր և ավել՝ 0%	0.95 ² %
B	<ul style="list-style-type: none"> Իրավաբանական անձինք՝ 3 մլն ՀՀ դրամ Ֆիզիկական անձինք՝ 100 000 ՀՀ դրամ 	0%	Մինչև 10մլն ՀՀ դրամ՝ 0%, 10մլն ՀՀ դրամը գերազանցող մասի դեպքում՝ •մինչև 730 օրը՝ 2% •731 օր և ավել՝ 0%	1.15 ² %

40. Թողարկման և Մարման վճարները, ինչպես նաև՝ թողարկման և մարման հետ կապված մյուս բոլոր ծախսերը, իրականացվում են Մասնակցի հաշվին:

41. Յուրաքանչյուր Մասնակցի՝ ամսական մինչև 10 մլն ՀՀ դրամ մարման պահանջի դեպքում Մարման վճար չի գանձվում: 10 մլն ՀՀ դրամը գերազանցող մասի նկատմամբ կիրառվում են Կանոնների 39-րդ կետի աղյուսակով սահմանված Մարման վճարի դրույքաչափերը՝ հիմնվելով Մասնակցի սկզբնական ներդրման ժամկետի վրա: Սույն կետը տարածվում է A և B դասերի Մասնակիցների մարման պահանջների վրա:

42. Եթե Մարման հայտում Մասնակիցը նշում է մարվող փայերի քանակը, և մարվող փայերի քանակի և Մարման գնի արտադրյալի արդյունքում Վճարման ենթակա գումարը չի գերազանցում 10մլն ՀՀ դրամը, ապա գործում են Կանոնների 41-րդ կետով

² Կառավարչի պարգևավճարի նշված դրույքաչափը ուժի մեջ է մտնում Կանոնների նոր խմբագրության՝ ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելուց հետո՝ ոչ շուտ քան 2024 թվականի հունվարի մեկը:

սահմանված դրույթները: 10 մլն ՀՀ դրամը գերազանցող մասի նկատմամբ կիրառվում են Կանոնների 39-րդ կետի աղյուսակով սահմանված Մարման վճարի դրույքաչափերը:

43. Մարման վճարը գանձվում է Ֆոնդի օգտին:

44. Եթե Մասնակիցը ունի մի քանի Արժեթղթերի հաշիվ, որոնք բացվել են տարբեր Հաշվի օպերատորների մոտ, ապա մարման կարող է ներկայացվել առավելագույնը տվյալ Հաշվի օպերատորի միջոցով բացված Արժեթղթերի հաշվում առկա փայերի չափով:

45. Կանոնների 105-րդ կետում նշված Մարման գնի նկատմամբ կիրառվում է Մարման վճար հետևյալ սկզբունքով՝

$$U_{\Phi} = (1 - U^{\text{Կ}}) * \Phi Z U_{t+1}$$

որտեղ՝

U_Գ-ն Մարման գինն է,

ΦU_{t+1}-ը Հաշվարկման օրվան հաջորդող Հաշվարկման օրվա տվյալ դասի փայի հաշվարկային արժեքը,

UU-ն Կանոնների 39-րդ և 41-րդ կետերում նշված Մարման վճարը:

46. Մասնակցի պահանջի դեպքում Հաշվի օպերատորը հաղորդակցման համընդհանուր ընդունելի եղանակներից որևէ մեկով հաշվետվություն է ներկայացնում, որը պարունակում է տեղեկատվություն փայ ձեռքբերող կամ մարող անձի կողմից վճարված Թողարկման կամ Մարման վճարների գումարի մասին:

47. Մասնակիցները ստանում են փայերի տիրապետումից բխող հետևյալ իրավունքներ՝

- 1) Կանոնների և ՀՀ օրենսդրության համաձայն պահանջել փայերի մարում,
- 2) Փայերը փոխանցել երրորդ անձին,
- 3) Փայերը գրավադրել,
- 4) Ժառանգել փայերը,
- 5) Հանդիսանալ իր կողմից տնօրինվող փայերի քանակին համապատասխան Ֆոնդի ակտիվների մասնաբաժնի սեփականատեր,
- 6) Կանոնների համաձայն՝ Ֆոնդի դադարեցման դեպքում ակտիվների մնացորդից ստանալ իր կողմից տնօրինվող փայերի քանակին համապատասխան մասնաբաժինը դրամական տեսքով,
- 7) Փոխհատուցում պահանջել Կառավարչից նրա պարտականությունների խախտման հետևանքով իրեն պատճառված վնասի համար,
- 8) Պահանջել իր կողմից տնօրինվող փայերի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 9) Իրականացնել օրենքով կամ Կանոններով սահմանված այլ գործողություններ:

48. Մասնակցի համար փայերով հավաստվող իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում փայերի թողարկման պահից և դադարում են

փայերի մարման պահից: Փայը համարվում է թողարկված Ռեեստրում գրանցում կատարելու պահից և մարված՝ Ռեեստրից դուրս գրվելու պահից սկսած:

49. Փայերի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է Ռեեստրում գրառում կատարելու պահից:

50. Մասնակիցը փայերով ամրագրված իրավունքները պետք է իրականացնի բարեխղճորեն և ՀՀ օրենսդրությանը ու Կանոններին համապատասխան:

51. Մասնակցի պահանջով Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտից բացի հավելյալ աուդիտի իրականացումը, ինչպես նաև՝ այլ լրացուցիչ պահանջները, կատարվում են Մասնակցի հաշվին:

52. Կառավարիչը չի կարող ստանձնել պարտավորություններ Մասնակիցների անունից: Մասնակցի նկատմամբ պահանջների բավարարման համար պահանջվող վճարները կարող են կատարվել Մասնակցի փայերի հաշվին, սակայն ոչ Ֆոնդի ակտիվների հաշվին:

53. Մասնակիցն անձամբ պատասխանատու չէ Կառավարչի կողմից Ֆոնդի անունից ստանձնած պարտավորությունների համար, ինչպես նաև այն պարտավորությունների համար, որոնց կատարումը Կառավարիչն իրավունք ունի պահանջել Ֆոնդից Կանոններին համապատասխան: Այդ պարտավորությունների կատարման համար Մասնակցի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Ֆոնդի ակտիվներում նրա ունեցած բաժնեմասով:

ԳԼՈՒԽ V. ՖՈՆԴԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

54. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը Ֆոնդի ակտիվների շուկայական արժեքների հանրագումարի և Ֆոնդի ստանձնած պարտավորությունների արժեքի տարբերությունն է:

55. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է ՀՀ դրամով:

56. Արտարժույթը և արտարժույթային ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են ՀՀ դրամով Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Գնահատման օրվա դրությամբ համապատասխան արտարժույթի կարգավորվող շուկայում տվյալ արտարժույթով առևտրային նստաշրջանի վերջին գործարքի գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ տվյալ արտարժույթի համար Գնահատման օրվա ԿԲ հրապարակած հաշվարկային փոխարժեքով:

57. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում բանկային հաշիվներում, բրոքերային հաշիվներում, դրամական միջոցների հաշվառման հաշիվներում առկա միջոցների և բանկային ավանդների արժեքը որոշվում է Կտրման պահի դրությամբ տվյալ հաշիվներում առկա մնացորդային գումարների և հաշվեգրված ու չստացված տոկոսագումարների հանրագումարով: Ավանդների, դրամական միջոցների հաշվառման հաշիվների, ընթացիկ հաշիվների, բրոքերային հաշիվների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները հաշվառվում են որպես հաշվեգրված եկամուտ

Կտրման պահի դրությամբ: Ոչ աշխատանքային օրերի համար հաշվեգրված տոկոսները ներառվում են Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում: Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում ավանդների, դրամական միջոցների հաշվառման հաշիվների, ընթացիկ և բրոքերային հաշիվների համար հաշվարկված, սակայն դեռևս չստացված տոկոսները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ:

58. ՀՀ դրամով արտահայտված պետական արժեթղթերը գնահատվում են Գնահատման օրվա կտրման պահի դրությամբ ԿԲ կողմից հրապարակվող ՀՀ պետական պարտատոմսերի վերջին հասանելի եկամտաբերության կորի հիման վրա: Փայի հաշվարկային արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման:

59. ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ոչ պետական արժեթղթերը գնահատվում են Գնահատման օրվա կտրման պահի դրությամբ կարգավորվող շուկայում տվյալ արժեթղթի փակման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ Գնահատման օրվա առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների միջին թվաբանականով: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները կլորացվում են ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ:

60. Եթե Կանոնների 59-րդ կետով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) Գնահատման օրվա կտրման պահի դրությամբ, ապա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթը գնահատվում է տվյալ արժեթղթի՝ Գնահատման օրվան նախորդող վերջին հայտնի փակման գնով, բացառությամբ այն դեպքերի, երբ Կանոնների 59-րդ կետով սահմանված գները հասանելի չեն (առկա չեն) Գնահատման օրվա դրությամբ վերջին 30 աշխատանքային օրերից ոչ մեկի համար: Այդ պարագայում կիրառվում են Կանոնների 68-րդ կետով սահմանված դրույթները:

61. ՀՀ-ում բաժանորդագրման կամ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված ոչ պետական արժեթղթերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկողի կողմից հրապարակված վերջին հասանելի գներով մինչև տվյալ արժեթղթի՝ կարգավորվող շուկայում շրջանառության թույլտվություն ստանալը և կարգավորվող շուկայում հրապարակված գնի առկայությունը, որից հետո՝ գնահատումն իրականացվում է Կանոնների 59-րդ և 60-րդ կետերի համաձայն: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները մինչև տվյալ արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալը վերցվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման: Այն դեպքում, երբ բաժանորդագրման կամ հրապարակային առաջարկի միջոցով ձեռք բերված նոր թողարկված ոչ պետական արժեթղթերի համար թողարկողի կողմից հրապարակված գին հասանելի չէ, տվյալ արժեթղթերը գնահատվում են բաժանորդագրությամբ/հրապարակային առաջարկի միջոցով ձեռքբերման գնով՝ կլորացված ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ, այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ արժեթուղթը թույլատրված չէ կարգավորվող շուկայում առևտրին, և տվյալ

արժեթղթի գծով կարգավորվող շուկայում գին հրապարակված չէ, որից հետո գնահատումն իրականացվում է Կանոնների 59-րդ և 60-րդ կետերի համաձայն:

62. ՀՀ-ում առաջնային աճուրդի միջոցով ձեռք բերված նոր թողարկված ոչ պետական արժեթղթերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են տվյալ առաջնային աճուրդի միջին կշռված գնով՝ կլորացված ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ, այնքան ժամանակ, քանի դեռ տվյալ արժեթուղթը թույլատրված չէ կարգավորվող շուկայում առևտրին, և տվյալ արժեթղթի գծով կարգավորվող շուկայում գին հրապարակված չէ, որից հետո՝ գնահատումն իրականացվում է Կանոնների 59-րդ և 60-րդ կետերի համաձայն:

63. ՀՀ անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերը, որոնք շրջանառվում են օտարերկրյա կարգավորվող շուկաներում (եվրոպարտատոմսեր) և ՀՀ-ում գրանցված ընկերությունների կողմից արտարժույթով թողարկված եվրոպարտատոմսերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական աղբյուրներից ստացված գնով, որոնց առաջնայնությունը և գնանշման չափանիշները ներկայացված են Կառավարչի ինտերնետային կայքում տեղադրված առանձին ընթացակարգում: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ առանց կլորացման:

64. Օտարերկրյա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված օտարերկրյա պարտքային և բաժնային արժեթղթերը և ներդրումային ֆոնդերի փայերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի կողմից տրամադրված միջազգային ֆինանսական շուկայում ընդունված տեղեկատվական աղբյուրներից ստացված գնով, որոնց առաջնայնությունը և գնանշման չափանիշները ներկայացված են Կառավարչի ինտերնետային կայքում տեղադրված առանձին ընթացակարգում: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները վերցվում են հրապարակման ճշտությամբ առանց կլորացման:

65. Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի) փայերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են դրանց հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ: Այն դեպքում, երբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի) կողմից ողջամիտ և բավարար պարբերականությամբ Կառավարչին ներկայացվում են ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի) Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, ապա դրանք հաշվարկում ներառվում են տվյալ ներդրումային ֆոնդի կառավարչից գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և տվյալ ներդրումային ֆոնդի կառավարչից գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը

Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը տվյալ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից ստացվել է ոչ աշխատանքային օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ մասնավոր բաժնեմասնակցային ֆոնդերի) փայերի տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

66. Օտարերկրյա ներդրումային ֆոնդի փայերը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում գնահատվում են Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկողի կողմից հրապարակված փայերի վերջին հասանելի հաշվարկային արժեքի հիման վրա: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում այս արժեթղթերի գները ներառվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման: Օտարերկրյա արժեթղթերը և դրանց ձեռքբերման/վաճառքի հետ կապված միջնորդավճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են օտարերկրյա բրոքերից/Կոնտրազենտից գործարքի հաստատումը ստանալու օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և օտարերկրյա բրոքերից/Կոնտրազենտից գործարքի հաստատումը ստանալու օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատումը օտարերկրյա բրոքերի/Կոնտրազենտի կողմից ստացվել է ոչ աշխատանքային օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա արժեթղթերի տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

67. Բաժանորդագրության միջոցով ձեռքբերված/վաճառված օտարերկրյա ֆոնդերի փայերը և դրանց ձեռքբերման/վաճառքի հետ կապված միջնորդավճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի/Կոնտրազենտի կողմից ստացված տեղեկատվության օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի/Կոնտրազենտի կողմից ստացված տեղեկատվության օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը Պահառուից/Կոնտրազենտից ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում բաժանորդագրության միջոցով ձեռքբերված/վաճառված օտարերկրյա ֆոնդերի փայերով կատարված տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

68. Կարգավորվող շուկայում առևտրին չթույլատրված արժեթուղթը գնահատվում է դրա հնարավոր վաճառքի ողջամիտ գնով, որը որոշվել է բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ:

69. Օտարերկրյա պահառուի մոտ հաշվառվող դրամական միջոցների օտարերկրյա արժեթղթերի և ներդրումային ֆոնդերի փայերի փոխանցման հետ կապված միջնորդավճարները և այլ վճարները Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում են Պահառուի կողմից ստացված համապատասխան հիմնավորող հաշվարկային փաստաթղթի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ Կանոնակարգ 10/04-ով: Պահառուի կողմից ստացված համապատասխան հիմնավորող հաշվարկային փաստաթղթում առկա տեղեկատվությունը արտացոլվում է Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում, եթե Պահառուի կողմից համապատասխան հիմնավորող հաշվարկային փաստաթուղթը ստացվել է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և տվյալ փաստաթղթի ստացման օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, , եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո:

70. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում արտասահմանյան օտարերկրյա պահառու/ենթապահառու բանկում փոխարկված արտարժույթը արտացոլվում է գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի կողմից ստացված տեղեկատվության օրվա դրությամբ, եթե Կառավարչին տվյալ տեղեկատվությունը հասանելի է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրը մինչև ժամը 11:00-ն, և գործարքի հաստատման վերաբերյալ Պահառուի կողմից ստացված տեղեկատվության օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում, եթե տվյալ տեղեկատվությունը Կառավարչին հասանելի է դառնում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա ժամը 11:00-ից հետո: Եթե գործարքի հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը Պահառուից ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա տվյալ գործարքը ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

71. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա ֆոնդերի ստացվելիք շահաբաժինները հաշվեգրվում են շահաբաժնի հայտարարման օրվա դրությամբ՝ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրակացնողի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա և վերագնահատվում Կանոնների 56-րդ կետի կարգով օրական կտրվածքով մինչև վճարման օրը: Եթե օտարերկրյա ֆոնդերի շահաբաժինների վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը ստացել է ոչ աշխատանքային օրերին, ապա այն ներառվում է ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

72. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օտարերկրյա արժեթղթերի, ՀՀ անունից թողարկված արտարժույթով արտահայտված պարտատոմսերի (եվրոպարտատոմսեր) և ՀՀ-ում գրանցված ընկերությունների կողմից արտարժույթով թողարկված եվրոպարտատոմսերի ստացվելիք արժեկտրոնները հաշվեգրվում և

վերագնահատվում են օրական կտրվածքով յուրաքանչյուր արժեկտրոնին բնորոշ հաշվեգրման և վերագնահատման սկզբունքին համապատասխան՝ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա: Եթե արժեկտրոնի վճարման վերաբերյալ տեղեկատվությունը Կառավարիչը ստանում է ոչ աշխատանքային օրերին, ապա դրանք ներառվում են ոչ աշխատանքային օրերին հաջորդող Հաշվարկման օրը հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

73. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկման համար Ֆոնդի ակտիվները գույքագրվում են Կտրման պահի դրությամբ:

74. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկը կատարվում է Հաշվարկման օրը մինչև UTC+4 ժամային գոտու ժամը 11:00-ն Կառավարչին հասանելի ամենաթարմ տեղեկատվությամբ, բացառությամբ՝ Կանոններով նախատեսված դեպքերի:

75. Ֆոնդի կազմում ներառված օտարերկրյա արժեթղթերի վերագնահատման համար հիմք են հանդիսանում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի Հաշվարկման օրվա՝ UTC+4 ժամային գոտու ժամը 06:30-ի դրությամբ հասանելի փակման գները: Կառավարչի կայքում հրապարակված ոչ աշխատանքային օրերի համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկի ժամանակ տվյալ փակման գները հասանելի չեն, ապա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում օգտագործվում են հաշվարկման պահին հասանելի վերջին փակման գները:

76. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը որոշվում է Ֆոնդի ակտիվների ընդհանուր շուկայական արժեքից՝ նվազեցնելով Ֆոնդի ստանձնած պարտավորությունները (պահանջները), որոնք հաշվարկվում են հաշվեգրման կարգով և ներառում են՝

- 1) Կառավարչի պարգևավճարը,
- 2) Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտի վճարը,
- 3) Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը, այդ թվում՝ բրոքերային միջնորդավճարները և գործարքների իրականացման հետ կապված այլ վճարները (միջնորդավճարներ, հարկեր),
- 4) արժեթղթերի և դրամական միջոցների փոխանցումների գծով վճարները,
- 5) Ֆոնդի փայերի հետգնման (մարման) համար Ֆոնդի Մասնակիցներին Վճարման ենթակա գումարները,
- 6) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) և ռեպո գործարքների գումարները,
- 7) Ֆոնդի հաշվին ներգրավված վարկերի (փոխառությունների) գծով վճարվելիք տոկոսները, ռեպո և հակադարձ ռեպո գործարքների գծով վճարվելիք տոկոսները,
- 8) Ֆոնդի շահութահարկի հաշվեգրված գումարը,
- 9) Ֆոնդի ակտիվների հաշվին վճարման ենթակա պարտադիր վճարները,
- 10) ներդրումային առաջարկների և հետազոտությունների ձեռքբերման ծախսերը,
- 11) Ֆոնդի ակտիվների ներդրման հետ կապված իրավաբանական ծախսերը, դատական ծախսերը:

77. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Կառավարչի պարզևավճարը հաշվարկվում է Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ:

78. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների տարեկան արտաքին աուդիտի վճարը հաշվեգրվում է գծային ամորտիզացիայի մեթոդով:

Աուդիտի վճարի հաշվեգրվող մեծությունը որոշվում է հետևյալ սկզբունքով՝

$$ԱՎ_t^A = W_{t-1}^A * ԱՏՎ * \frac{N}{365^*}$$

$$ԱՎ_t^B = W_{t-1}^B * ԱՏՎ * \frac{N}{365^*}$$

որտեղ՝

$ԱՎ_t^A$ և $ԱՎ_t^B$ համապատասխանաբար A և B դասերի համար աուդիտորական վճարի Գնահատման օրվա մեծություններ են,

ԱՏՎ-ն արտաքին աուդիտի տարեկան վճարն է,

W_{t-1}^A և W_{t-1}^B Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա դրությամբ համապատասխանաբար A և B դասերի համար Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում ունեցած համամասնություններն են,

N -ը հաշվեգրման օրերի քանակն է,

* նահանջ տարվա դեպքում՝ 366 օր:

Աուդիտորական ծառայությունների մատուցման կանխավճարի մեծությունը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում է Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա A և B դասերով հաշվեգրված աուդիտի վճարի համամասնությամբ, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$W_t^A = \frac{ԱՎ_{t-1}^A}{ԱՎ_{t-1}^A + ԱՎ_{t-1}^B}$$

$$W_t^B = \frac{ԱՎ_{t-1}^B}{ԱՎ_{t-1}^A + ԱՎ_{t-1}^B}$$

որտեղ՝

W_t^A և W_t^B Գնահատման օրվա դրությամբ համապատասխանաբար A և B դասերի համար Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում ունեցած համամասնություններն են,

$ԱՎ_{t-1}^A$ -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա դրությամբ A դասի համար հաշվեգրված աուդիտի վճարի մեծությունն է,

$ԱՎ_{t-1}^B$ -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա դրությամբ B դասի համար հաշվեգրված աուդիտի վճարի մեծությունն է:

79. Ֆոնդի կողմից վճարվելիք շահութահարկը հաշվեգրվում է օրական կտրվածքով (հաշվեգրվող շահույթի որոշման նպատակով Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի մեծության և ֆոնդերի համար սահմանված շահութահարկի տարեկան դրույքաչափի $1/365^*$ -րդի հիման վրա): Հաշվեգրվող շահութահարկի մեծությունը որոշվում է հետևյալ սկզբունքով՝

$$\tilde{C}_t^A = \mathcal{U}U_{t-1}^A * 0.01\% * \frac{N}{365^*}$$

որտեղ՝

\tilde{C}_t^A -ն Գնահատման օրվա դրությամբ A դասի համար հաշվեգրվող շահութահարկի մեծությունն է,

$\mathcal{U}U_{t-1}^A$ -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա դրությամբ A դասի Զուտ ակտիվների արժեքը,

N-ը հաշվեգրված օրերի քանակն է,

* նահանջ տարվա դեպքում՝ 366 օր,

$$\tilde{C}_t^B = \mathcal{U}U_{t-1}^B * 0.01\% * \frac{N}{365^*}$$

որտեղ՝

\tilde{C}_t^B -ն Գնահատման օրվա դրությամբ B դասի համար հաշվեգրվող շահութահարկի մեծությունն է,

$\mathcal{U}U_{t-1}^B$ -ը Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա դրությամբ B դասի Զուտ ակտիվների արժեքը,

N-ը հաշվեգրված օրերի քանակն է,

* նահանջ տարվա դեպքում՝ 366 օր:

Շահութահարկի կանխավճարի մեծությունը³ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում է Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա A և B դասերով հաշվեգրված շահութահարկի համամասնությամբ, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$W_t^A = \frac{\tilde{C}_{t-1}^A}{\tilde{C}_{t-1}^A + \tilde{C}_{t-1}^B}$$

$$W_t^B = \frac{\tilde{C}_{t-1}^B}{\tilde{C}_{t-1}^A + \tilde{C}_{t-1}^B}$$

որտեղ՝

³ Շահութահարկի կանխավճարը որոշվում է ՀՀ Հարկային Օրենսգրքի համաձայն:

W_t^A և W_t^B Գնահատման օրվա դրությամբ համապատասխանաբար A և B դասերի համար Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում ունեցած համամասնություններն են,

\bar{Z}_{t-1}^A -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա դրությամբ A դասի համար հաշվեգրված շահութահարկի մեծությունն է,

\bar{Z}_{t-1}^B -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա դրությամբ B դասի համար հաշվեգրված շահութահարկի մեծությունն է:

80. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում պարտավորությունները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ, բացառությամբ՝ փայերի մարման արդյունքում Վճարման ենթակա գումարների, որոնք կլորացվում են դեպի վերև՝ առանց նիշի ճշտության: Պարտավորությունների կուտակումը ոչ աշխատանքային օրերի համար արտացոլվում է Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

81. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում փայերի մարման պարտավորությունները ներառվում են փայերի սառեցման օրվա համար հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում: Գնահատման օրվան հաջորդող ոչ աշխատանքային օրերին սառեցված փայերը և վերջիններիս հետ կապված մարման պարտավորությունները ներառվում են Գնահատման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում:

82. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակելուց հետո որևէ էական սխալի, էական իրադարձության կամ հանգամանքի տեղի ունենալու կամ ի հայտ գալու դեպքում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Կառավարչի մասնագիտական կարծիքով էականորեն կարող է ազդել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի վրա, Կառավարիչը պետք է վերագնահատի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը և/կամ փայի հաշվարկային արժեքը, եթե վերագնահատման չիրականացմամբ կվնասվեին Մասնակիցների շահերը՝ բացառելով հայտնաբերված էական սխալի առկայությունը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հետագա հաշվարկում: Էական սխալի դեպքում փայի ուղղված հաշվարկային արժեքին կից պետք է ներկայացվեն ուղղման վերաբերյալ համապատասխան պարզաբանումներ: Ընդ որում, սույն Կանոնների համաձայն՝ սխալը համարվում է էական, եթե դրա հետևանքով Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի փոփոխությունը գերազանցում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.3 տոկոսը:

83. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկելուց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակելուց հետո Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ոչ էական սխալ բացահայտվելու դեպքում Կառավարիչը սխալի հայտնաբերման օրվան հաջորդող Գնահատման օրվա հաշվարկում պետք է այն ուղղի՝ բացառելով հայտնաբերված սխալի առկայությունը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հետագա հաշվարկում:

84. Փայի հաշվարկային արժեքը, Տեղաբաշխման և Մարման գները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ:

85. Յուրաքանչյուր դասի Փայի հաշվարկային արժեքը հավասար է Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի տվյալ դասի զուտ ակտիվների արժեքի և Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ թողարկված և չմարված տվյալ դասի փայերի քանակի հարաբերությանը: Ֆոնդի ակտիվներից նվազեցվում են բոլոր այն ծախսերը, որոնք ընդհանուր են բոլոր դասերի փայերի համար: Ֆոնդի ակտիվները վերը նշված նվազեցումից հետո բաժանվում են ըստ յուրաքանչյուր դասին համապատասխան ակտիվների: Այնուհետև, յուրաքանչյուր դասին պատկանող ակտիվների (ընդհանուր ծախսերը նվազեցված) արժեքից հանվում է յուրաքանչյուր դասի համար հաշվարկված Կառավարչի պարգևավճարը: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝

$$\mathcal{U}U_t = \mathcal{U}U_t^A + \mathcal{U}U_t^B$$

որտեղ յուրաքանչյուր դասի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝

$$\mathcal{U}U_t^A = w_{t-1}^A * \mathcal{L}U_t - \mathcal{L}\mathcal{N}_t^A - \mathcal{V}\mathcal{N}_t^A$$

որտեղ՝

$\mathcal{U}U_t^A$ -ն Գնահատման օրվա A դասի Չուտ ակտիվների արժեքն է,

$\mathcal{L}U_t$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի ընդհանուր ակտիվների մեծությունն է,

$\mathcal{L}\mathcal{N}_t^A$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A դասի ընդհանուր պարտավորությունների մեծությունն է, բացառությամբ՝ Կառավարչի պարգևավճարի,

$\mathcal{V}\mathcal{N}_t^A$ -ը Գնահատման օրվա դրությամբ A դասի համար Կառավարչի պարգևավճարը,

w_{t-1}^A -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա A դասի փայերի Չուտ ակտիվների արժեքի մասնաբաժինն է Ֆոնդի Ընդհանուր զուտ ակտիվների արժեքում:

w_t^A -ն հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝

$$w_t^A = \frac{w_{t-1}^A * \mathcal{L}U_{t-1} + \mathcal{P}\mathcal{Q}_t^A - \mathcal{U}\mathcal{Q}_t^A - \mathcal{V}\mathcal{V}\mathcal{N}_t^A - \mathcal{V}\mathcal{C}\mathcal{Z}_t^A - \mathcal{V}\mathcal{V}\mathcal{U}\mathcal{O}_t^A}{\mathcal{L}U_{t-1} + \mathcal{P}\mathcal{Q}_t^{\mathcal{P}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{U}\mathcal{Q}_t^{\mathcal{P}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{V}\mathcal{V}\mathcal{N}_t^{\mathcal{P}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{V}\mathcal{C}\mathcal{Z}_t^{\mathcal{P}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{V}\mathcal{V}\mathcal{U}\mathcal{O}_t^{\mathcal{P}\mathcal{I}\mathcal{N}}}$$

որտեղ՝

w_t^A -ն Գնահատման օրվա դրությամբ A դասի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում ունեցած մասնաբաժինն է,

w_{t-1}^A -ը Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա A դասի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում ունեցած մասնաբաժինն է,

$\mathcal{L}U_{t-1}$ -ը Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա Ֆոնդի ընդհանուր ակտիվների մեծությունն է,

$\mathcal{P}\mathcal{Q}_t^A$ -ն Գնահատման օրվա դրությամբ A դասի գծով թողարկման գումարն է, ընդ որում, այն հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝

$$I\theta Q_t^A = I\theta\Phi F_t^A * \Phi Z U_t^A$$

Որտեղ՝

$I\theta\Phi F_t^A$ ՝ Գնահատման օրվա դրությամբ A դասի թողարկված փայերի քանակ,
 $\Phi Z U_t^A$ ՝ Գնահատման օրվա դրությամբ A դասի փայի հաշվարկային արժեք,
 UQ_t^A -ն Գնահատման օրվա դրությամբ A դասի գծով Մարման ենթակա գումարն է, ընդ որում՝

$$UQ_t^A = U\Phi F_t^A * \Phi Z U_t^A$$

Որտեղ՝

$U\Phi F_t^A$ ՝ Գնահատման օրվա դրությամբ A դասի մարվող փայերի քանակ,
 $\Phi Z U_t^A$ ՝ Գնահատման օրվա դրությամբ A դասի փայի հաշվարկային արժեք,
 $I\theta Q_t^{ն\eta}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով թողարկման ընդհանուր գումարն է, որը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝

$$I\theta Q_t^{ն\eta} = I\theta Q_t^A + I\theta Q_t^B$$

$UQ_t^{ն\eta}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով Մարման ենթակա ընդհանուր գումարն է, ընդ որում՝

$$UQ_t^{ն\eta} = UQ_t^A + UQ_t^B$$

$\psi\psi\eta_t^A$ -ն Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A դասի գծով վճարված Կառավարչի պարգևավճարի մեծությունն է,

$\psi\psi\eta_t^{ն\eta}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով վճարված Կառավարչի պարգևավճարի մեծությունն է,

$\psi\psi Z_t^A$ -ն Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A դասի գծով վճարված շահութահարկի մեծությունն է,

$\psi\psi Z_t^{ն\eta}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով վճարված շահութահարկի մեծությունն է,

$\psi\psi U\sigma_t^A$ -ն Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A դասի գծով վճարված Կշռմանը մասնակցող ծախսերը,

$\psi\psi U\sigma_t^{ն\eta}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով վճարված Կշռմանը մասնակցող ծախսերը:

$$Q\psi U_t^B = w_{t-1}^B * L\psi U_t - L\psi \eta_t^B - \psi\psi \eta_t^B$$

որտեղ՝

$Q\psi U_t^B$ -ն Գնահատման օրվա B դասի Զուտ ակտիվների արժեքն է,

$L\psi U_t$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի ընդհանուր ակտիվներն են,

$\mathcal{L}\eta_t^B$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի B դասի ընդհանուր պարտավորությունների մեծությունն է, բացառությամբ՝ Կառավարչի պարգևավճարի,

$\mathcal{V}\eta_t^B$ -ը Գնահատման օրվա դրությամբ B դասի համար Կառավարչի պարգևավճարն է, w_{t-1}^B -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա B դասի փայերի Չուտ ակտիվների արժեքի մասնաբաժինն է Ֆոնդի Ընդհանուր զուտ ակտիվների արժեքում: w_t^B -ն հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝

$$w_t^B = \frac{w_{t-1}^B * \mathcal{L}U_{t-1} + \mathcal{I}\mathcal{Q}_t^B - \mathcal{U}\mathcal{Q}_t^B - \mathcal{V}\mathcal{V}\eta_t^B - \mathcal{V}\mathcal{C}\mathcal{Z}_t^B - \mathcal{V}\mathcal{V}\mathcal{U}\mathcal{O}_t^B}{\mathcal{L}U_{t-1} + \mathcal{I}\mathcal{Q}_t^{\mathcal{P}\mathcal{L}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{U}\mathcal{Q}_t^{\mathcal{P}\mathcal{L}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{V}\mathcal{V}\eta_t^{\mathcal{P}\mathcal{L}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{V}\mathcal{C}\mathcal{Z}_t^{\mathcal{P}\mathcal{L}\mathcal{I}\mathcal{N}} - \mathcal{V}\mathcal{V}\mathcal{U}\mathcal{O}_t^{\mathcal{P}\mathcal{L}\mathcal{I}\mathcal{N}}}$$

որտեղ՝

w_t^B -ն Գնահատման օրվա դրությամբ B դասի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում ունեցած մասնաբաժինն է,

w_{t-1}^B -ը Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա B դասի Ֆոնդի զուտ ակտիվների արժեքում ունեցած մասնաբաժինն է,

$\mathcal{L}U_{t-1}$ -ը Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա Ֆոնդ ընդհանուր ակտիվների մեծությունն է,

$\mathcal{I}\mathcal{Q}_t^B$ -ն Գնահատման օրվա դրությամբ B դասի գծով թողարկման գումարն է, ընդ որում, այն հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝

$$\mathcal{I}\mathcal{Q}_t^B = \mathcal{I}\mathcal{P}\mathcal{F}_t^B * \mathcal{P}\mathcal{Z}U_t^B$$

Որտեղ՝

$\mathcal{I}\mathcal{P}\mathcal{F}_t^B$ ՝ Գնահատման օրվա դրությամբ B դասի թողարկված փայերի քանակ,

$\mathcal{P}\mathcal{Z}U_t^B$ ՝ Գնահատման օրվա դրությամբ B դասի փայի հաշվարկային արժեք,

$\mathcal{U}\mathcal{Q}_t^B$ -ն Գնահատման օրվա դրությամբ B դասի գծով Մարման ենթակա գումարն է, ընդ որում՝

$$\mathcal{U}\mathcal{Q}_t^B = \mathcal{U}\mathcal{P}\mathcal{F}_t^B * \mathcal{P}\mathcal{Z}U_t^B$$

Որտեղ՝

$\mathcal{U}\mathcal{P}\mathcal{F}_t^B$ ՝ Գնահատման օրվա դրությամբ B դասի մարվող փայերի քանակ,

$\mathcal{P}\mathcal{Z}U_t^B$ ՝ Գնահատման օրվա դրությամբ B դասի փայի հաշվարկային արժեք,

$\mathcal{I}\mathcal{Q}_t^{\mathcal{P}\mathcal{L}\mathcal{I}\mathcal{N}}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով թողարկման ընդհանուր գումարն է,

$\mathcal{U}\mathcal{Q}_t^{\mathcal{P}\mathcal{L}\mathcal{I}\mathcal{N}}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով Մարման ենթակա ընդհանուր գումարն է,

$\mathcal{V}\mathcal{V}\eta_t^A$ -ն Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A դասի գծով վճարված Կառավարչի պարգևավճարի մեծությունն է,

$\varphi_{\mathcal{A}}^{p_{in}}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով վճարված Կառավարչի պարգևավճարի մեծությունն է,

$\varphi_{\mathcal{B}}^B$ -ն Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի B դասի գծով վճարված շահութահարկի մեծությունն է,

$\varphi_{\mathcal{A}}^{p_{in}}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով վճարված շահութահարկի մեծությունն է,

$\varphi_{\mathcal{B}}^B$ -ն Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի B դասի գծով վճարված Կշռմանը մասնակցող ծախսերը,

$\varphi_{\mathcal{B}}^{p_{in}}$ -ը Գնահատման օրվա դրությամբ Ֆոնդի A և B դասերի գծով վճարված Կշռմանը մասնակցող ծախսերը:

86. Ստանդարտացված ածանցյալ գործիքները գնահատվում են Գնահատման օրվա կտրման պահի դրությամբ կարգավորվող շուկայում տվյալ ածանցյալ գործիքի փակման գնով, իսկ դրա բացակայության դեպքում՝ Գնահատման օրվա առևտրային նստաշրջանի փակման պահի դրությամբ գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների միջին թվաբանականով: Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ածանցյալ գործիքների գները ներառվում են հրապարակման ճշտությամբ՝ առանց կլորացման: Օտարերկրյա կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված օտարերկրյա ածանցյալ գործիքները գնահատվում են Կանոնների 64-րդ կետով սահմանված կարգով:

87. Ոչ ստանդարտացված ածանցյալ գործիքները գնահատվում են Կանոնների 68-րդ կետով սահմանված կարգով:

88. Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկում պարտավորությունների մասով ճշգրտումներ իրականացնելու անհրաժեշտության պարագայում ճշգրտվող մեծությունը Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառվում է Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա A և B դասերով հաշվեգրված մեծությունների համամասնությամբ:

89. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, փայի հաշվարկային արժեքը, Տեղաբաշխման և Մարման գները հաշվարկվում և հրապարակվում են յուրաքանչյուր Աշխատանքային օր: Կառավարիչը որոշակի աշխատանքային օրերի կարող է չհաշվարկել և չհրապարակել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Այդ օրերը հրապարակվում են Կառավարչի ինտերնետային կայքում յուրաքանչյուր տարվա համար և ներառում են Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի ոչ աշխատանքային օրերը՝ անկախ դրանց՝ ՀՀ-ում աշխատանքային լինելու հանգամանքից:

90. Բացառություն են կազմում տարեվերջյան Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, որը հաշվարկվում է առանձին՝ տարեվերջյան հաշվետվության մեջ ներառվելու նկատառումով, և յուրաքանչյուր տարվա առաջին աշխատանքային օրվա համար հաշվարկվող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը: Մասնավորապես, Ֆոնդի զուտ

ակտիվների արժեքի տարեվերջյան հաշվարկը ներառում է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը հաշվեգրված բոլոր ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական և արտասահմանյան շուկաներում վերջին հասանելի գները, իսկ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի տարեսկզբյան հաշվարկը ներառում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից մինչև առաջին աշխատանքային օրը ներառյալ հաշվեգրված ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև՝ Հաշվարկման օրվան նախորդող օրվա դրությամբ տեղական և արտասահմանյան շուկաներում վերջին հասանելի գները: Հաշվարկման օրվան նախորդող ոչ աշխատանքային օրերի համար հաշվեգրումները ևս ներառվում են Գնահատման օրվա հաշվարկում:

91. Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի գնահատմանը և հաշվարկմանը վերաբերող և Կանոններով չկարգավորված հարցերը կանոնակարգվում են Կանոնակարգ 10/04-ով:

92. Կառավարիչը յուրաքանչյուր աշխատանքային օր մինչև ժամը 15:00-ն Ռեեստրավարի Ծրագրային համակարգ է մուտքագրում Գնահատման օրվա Փայի հաշվարկային արժեքը: Այն պարագայում, երբ Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողի կողմից Հաշվարկման օրվա ժամը 14:55-ի դրությամբ չի ուղարկվել Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման և հրապարակման ենթակա տեղեկատվությունը, ապա Կառավարիչը կարող է Հաշվարկման օրվա ժամը 15:00-ին Ռեեստրավարի ծրագրային համակարգ չմուտքագրել Հաշվարկման օրվա Ֆոնդի փայի հաշվարկային արժեքը՝ թողնելով անփոփոխ, այն է՝ Հաշվարկման օրվան նախորդող Գնահատման օրվա փայի հաշվարկային արժեքը: Ըստ այդմ, Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը ևս մնում է անփոփոխ: Հաշվարկման օրվան հաջորդող Հաշվարկման օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում Ֆոնդի ստանձնած պարտավորությունները պետք է հաշվարկվեն վերջին հրապարակված և ոչ էական սխալ պարունակող Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հիման վրա: Ակտիվային հոդվածներում առկա սխալների դեպքում ճշգրտումները պետք է կատարվեն ըստ համապատասխան հոդվածի:

ԳԼՈՒԽ VI. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

93. Ֆոնդի փայերի թողարկումն ու տեղաբաշխումը կազմակերպում և իրականացնում է Ռեեստրավարը՝ ՀՀ օրենսդրության, Կանոններին և Ռեեստրավարի «Ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման կանոններին» համապատասխան:

94. Փայերը թողարկվում են հրապարակային առաջարկի միջոցով: Փայերի թողարկումը շարունակական է, և թողարկման ծավալն ու թողարկվող փայերի քանակը ֆիքսված չեն:

95. Փայերը կարող են թողարկվել և մարվել յուրաքանչյուր աշխատանքային օր: Ընդ որում, թողարկում է համարվում Ռեեստրավարի «Ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման կանոններին» համաձայն

Ռեեստրավարի Ծրագրային համակարգում գրանցված «Առաքում վճարման դիմաց» սկզբունքով փոխանցման հանձնարարականների վերջնահաշվարկի իրականացումը և թողարկման գումարի՝ Ռեեստրավարի Ծրագրային համակարգում Ֆոնդի հաշվին արտացոլվելը:

96. Փայեր ձեռք բերելու համար անձը պետք է ունենա Ռեեստրավարի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»-ով սահմանված կարգով ակտիվ կարգավիճակով Արժեթղթերի հաշիվ:

97. Փայերի թողարկման ժամանակ Թողարկման վճար չի գանձվում, և փայի Տեղաբաշխման գինը համընկնում է փայի հաշվարկային արժեքի հետ:

98. Փայերը թողարկվում են Ձեռքբերման հայտ ներկայացվելու (սակայն ոչ շուտ, քան փայի դիմաց վճարումն ստանալու) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 15:00-ի դրությամբ Ռեեստրավարի Ծրագրային համակարգում առկա փայի Տեղաբաշխման գնով:

99. Փայեր կարող են ձեռք բերվել Կառավարչի ինտերնետային տնային էջում ներկայացված միջնորդների՝ Հաշվի օպերատորների միջոցով:

100. Փայերը ձեռք բերելու համար անձը կամ Մասնակիցը Հաշվի օպերատորին Ձեռքբերման հայտ է ներկայացնում: Ձեռքբերման հայտում Մասնակիցը նշում է կա՛մ ձեռքբերման ենթակա փայերի քանակը, կա՛մ այն գումարի չափը, որը ցանկանում է ներդնել Ֆոնդում: Եթե Ձեռքբերման հայտում նշվում է ձեռքբերման ենթակա փայերի քանակը, ապա դրանց համար թողարկման գումարը կլորացվում է դեպի վերև՝ առանց նիշի ճշտության:

ԳԼՈՒԽ VII. ՓԱՅԵՐԻ ՄԱՐՈՒՄԸ (ՀԵՏԳՆՈՒՄԸ) ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

101. Ֆոնդի փայերի մարումը (հետգնումը) և մարման արդյունքում միջոցների վճարումը կազմակերպում է Ռեեստրավարը՝ ՀՀ օրենսդրությանը, Կանոններին և Ռեեստրավարի «Ներդրումային ֆոնդերի թողարկած փայերի ադմինիստրավորման ծառայությունների մատուցման կանոններին» համապատասխան:

102. Փայերի մարման արդյունքում Վճարման ենթակա գումարը որոշվում է մարվող փայերի քանակի և Մարման գնի արտադրյալով (ներառյալ՝ Մարման վճարը) և վճարվում է Ֆոնդի ակտիվներին:

103. Փայերի մարումն իրականացվում է դրանց հետգնմամբ:

104. Փայերը մարելու համար Մասնակիցը Հաշվի օպերատորին Մարման հայտ է ներկայացնում: Մարման հայտում Մասնակիցը նշում է կա՛մ մարման ենթակա փայերի քանակը, կա՛մ այն գումարի չափը, որը ցանկանում է մարել:

105. Փայերը մարվում են Մարման հայտ ներկայացվելու (սակայն ոչ շուտ, քան փայի դիմաց վճարումն ստանալու) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը

15:00-ի դրությամբ Ռեեստրավարի Ծրագրային համակարգում առկա Փայի Մարման գնով:

106. Մարման վճարների մեծությունները և կիրարկումները ներկայացված են Կանոնների 39-րդ, 41-րդ և 42-րդ կետերում:

107. Փայերի մարումից ստացված միջոցները չեն հարկվում:

108. Փայերի վաճառքը, բացառությամբ՝ փայերի տեղաբաշխման և հետգնման, արգելված է:

ԳԼՈՒԽ VIII. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

109. Կառավարիչը Ֆոնդի փայեր ձեռք բերելու համար հանձնարարական է ներկայացնում իր բանկին՝ Ռեեստրավարի համապատասխան հաշվեհամարին սեփական փայերի ձեռքբերման համար նախատեսված գումարը փոխանցելու համար:

110. Կառավարչի կողմից Ձեռքբերման հայտ ներկայացվելու (սակայն ոչ շուտ, քան փայի դիմաց վճարումն ստանալու) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը Ռեեստրավարը Կառավարչի Արժեթղթերի հաշվին է փոխանցում Կառավարչի կողմից ձեռքբերվող Ֆոնդի փայերը:

111. Կառավարչի կողմից ձեռքբերվող փայերի քանակը որոշվում է՝ հիմք ընդունելով Ձեռքբերման հայտ ներկայացվելու (սակայն ոչ շուտ, քան փայի դիմաց վճարումն ստանալու) օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 15:00-ի դրությամբ Ռեեստրավարի Ծրագրային համակարգում առկա Փայի Տեղաբաշխման գինը:

112. Ռեեստրավարը Կառավարչի կողմից Մարման հայտ ստանալու դեպքում առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է Ֆոնդի փայերի հետգնումը (մարումը) և հետգնման (մարման) արդյունքում ստացված միջոցների վճարումը:

113. Ռեեստրավարը Կառավարչի կողմից Մարման հայտ ստանալուց հետո ձևավորում է փայերի մարման պահանջը, Կանոնների 39-րդ կետի աղյուսակի համաձայն որոշում է Մարման գինը և Վճարման ենթակա գումարը: Ռեեստրավարը Կառավարչին տրամադրում է տեղեկություն պահանջի մանրամասների վերաբերյալ, ներառյալ՝ մարման ենթակա փայերի քանակի և Վճարման ենթակա գումարի մասին:

114. Կառավարիչը մարման պահանջի մանրամասների վերաբերյալ տեղեկությունը Ռեեստրավարից ստանալուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում Ռեեստրավարին է ուղարկում համապատասխան մարման պահանջից բխող հանձնարարականը, որի արդյունքում իրականացվում է ձևավորված փայերի մարումը:

ԳԼՈՒԽ IX. ՓԱՅԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

115. Ֆոնդի փայերը փոխանցելի են: Ֆոնդի փայերը կարող են փոխանցվել նվիրատվության, ժառանգության կամ այլ կերպ ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

116. Իրավաբանական անձ ներդրողի դեպքում Ֆոնդի փայերը կարող են փոխանցվել իրավահաջորդության կարգով:

117. Եթե Մասնակիցն իր որևէ դասի փայը փոխանցում է այլ անձի, և վերջինս, Կանոնների համաձայն, չի կարող հանդիսանալ այդ դասի փայերի սեփականատեր, ապա Կառավարիչն իրավունք ունի մարել այդ անձին պատկանող փայերը՝ վճարելով մարման գումարը:

118. Նվիրառուն (ժառանգորդն) իրավունք ունի պահանջել փայերի մարում և ստանալ մարման արդյունքում գոյացող դրամական միջոցները: Փայերը մարելու նպատակով նվիրառուն դիմում է ներկայացնում Հաշվի օպերատորին՝ դրան կցելով նվիրատվության պայմանագիրը (ժառանգության վկայականը):

119. Կանոնների 118-րդ կետում նշված նվիրատվության պայմանագիրը (ժառանգության վկայականը) ներկայացնելուց հետո Ֆոնդի փայերը մարվում են, և մարման արդյունքում գոյացած միջոցները միանվագ վճարի տեսքով վճարվում են դիմումի ներկայացումից 3 աշխատանքային օրվա ընթացքում Հաշվի օպերատորի կողմից սահմանված ընթացակարգով:

120. Մասնակցի փայերը դատական կարգով անժառանգ ճանաչվելու դեպքում փոխանցվում են ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը:

ԳԼՈՒԽ X. ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԳԵՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՈՒՄԸ

121. Փայերի մարումը կարող է կասեցվել Կառավարչի որոշման հիման վրա կամ ԿԲ պահանջով:

122. Կառավարիչը կարող է կասեցնել Ֆոնդի փայերի մարումը առավելագույնը 3 ամիս ժամկետով հետևյալ հիմքերից որևէ մեկով, եթե այլ բան սահմանված չէ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և (կամ) ՀՀ կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով՝

- 1) եթե Ֆոնդի կանոնավոր կառավարումը կարող է տուժել փայերի մարման հետևանքով կատարվող վճարման արդյունքում, կամ
- 2) եթե Ֆոնդի Արժեթղթերը կամ այլ ակտիվները չեն կարող ողջամիտ պայմաններով արագորեն վաճառվել առանց Ֆոնդին և Մասնակիցներին վնաս պատճառելու, կամ
- 3) եթե դրանով այլ Մասնակիցների շահերը էականորեն կվնասվեն:

123. Կառավարիչը նախապես տեղեկացնում է ԿԲ-ին և Պահառուին փայերի մարման կասեցման և դրա պատճառների վերաբերյալ:

124. ԿԲ պահանջով Կառավարիչը պարտավոր է կասեցնել փայերի մարումը, եթե դա անհրաժեշտ է Մասնակիցների օրինական շահերը պաշտպանելու համար:

125. Կառավարիչը հայտարարություն է հրապարակում փայերի մարման կասեցման վերաբերյալ առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր ինտերնետային տնային էջում:

126. Փայերի թողարկում կամ մարում չի կարող իրականացվել այն ժամանակահատվածում, որի ընթացքում Ֆոնդի փայերի մարումը կասեցված է:

ՓԼՈՒԽ XI. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

127. Կառավարչի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և Կառավարչի կանոնադրությամբ:

128. Կառավարիչն իրավունք ունի կառավարել Ֆոնդի ակտիվները և իրականացնելու դրանից բխող բոլոր իրավունքները:

129. Կառավարիչն ունի հետևյալ պարտականությունները.

- 1) Ֆոնդի կառավարման հետ կապված իրավաբանական գործառույթներ և հաշվապահական հաշվառման կազմակերպում,
- 2) Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի, ինչպես նաև փայերի հաշվարկային արժեքի և Տեղաբաշխման ու Հետզնման (Մարման) գների հաշվարկում,
- 3) կառավարչական այլ գործառույթներ:

130. Կառավարիչը պարտավոր է Ֆոնդի ակտիվներով գործարքների իրականացման հետ ուղղակիորեն կապված ծախսերը կատարել իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես տվյալ Ֆոնդի կառավարիչ, և որ այդ գործարքներով իր ստանձնած պարտավորությունները կատարվում են բացառապես տվյալ Ֆոնդի ակտիվների հաշվին:

131. Կառավարիչը պարտավոր է ձեռք է բերել բավարար տեղեկատվություն այն ակտիվների վերաբերյալ, որոնցում Ֆոնդի հաշվին նախատեսում է ներդրումներ իրականացնել կամ արդեն իրականացրել է, պարտավոր է նաև մանրամասն ուսումնասիրել այն թողարկողի ֆինանսատնտեսական վիճակը, որի արժեթղթերը պլանավորում է ձեռք բերել կամ արդեն ձեռք է բերել Ֆոնդի հաշվին, ինչպես նաև, պետք է ձեռք բերի բավարար տեղեկատվություն գործընկերների վճարունակության վերաբերյալ, որոնց հետ Ֆոնդի հաշվին իրականացվում են գործառնություններ:

132. Կառավարիչը Ֆոնդում պետք է ունենա առնվազն 0.15 տոկոս մասնակցություն: Կառավարիչը կարող է ձեռք բերել կամ մարել Ֆոնդի փայերը յուրաքանչյուր աշխատանքային օր: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում Կառավարիչը ծանուցում է ԿԲ-ին իր կողմից փայերի ձեռքբերման կամ մարման մասին: Կառավարչի կողմից Ֆոնդում մասնակցության չափը հրապարակվում է Կանոնակարգ 8/03-ի համաձայն:

133. Կառավարիչն իրավունք ունի իր անունից Մասնակիցների կամ Ֆոնդի հաշվին պահանջ ներկայացնել (պարտավոր է, եթե նման պահանջի չներկայացումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել զգալի կորուստների Ֆոնդի կամ նրա Մասնակիցների համար) Պահառուի կամ երրորդ անձանց նկատմամբ:

134. Կառավարիչը պատասխանատվություն է կրում իր պարտականությունների խախտման հետևանքով Ֆոնդին կամ Մասնակիցներին պատճառված վնասի համար:

135. Կառավարիչը Ֆոնդի ակտիվների պահառության նպատակով Պահառուի հետ կնքում է պահառության պայմանագիր:

136. Կառավարիչն, առավել արդյունավետ կառավարման նպատակով, կարող է Ֆոնդի կառավարման գործառույթների մի մասը պատվիրակել երրորդ անձանց:

137. Պարտականությունների փոխանցումը երրորդ անձանց չի ազատում Կառավարչին Ֆոնդի կառավարման պարտավորությունից: Կառավարիչը շարունակում է պատասխանատվություն կրել պատվիրակված գործառույթների պատշաճ կերպով և բարեխղճորեն իրականացման համար:

138. Ֆոնդի ակտիվներով ներդրումների իրականացումը կարող է Կառավարչի կողմից փոխանցվել երրորդ անձի՝ միայն ԿԲ նորմատիվ իրավական ակտով սահմանված ակտիվների այն առավելագույն չափի համաձայն, որոնց ներդրման կառավարումը կարող է փոխանցվել երրորդ անձի, ինչպես նաև՝ Կառավարչի կողմից որոշված ներդրումային քաղաքականության և նշված քաղաքականության կիրառման վերաբերյալ Կառավարչի ցանկացած որոշման համաձայն:

139. Կառավարիչն իրավունք ունի փոխանցել Մասնակիցների տվյալները, այդ թվում՝ անձնական տվյալները, միևնույն խմբին պատկանող ցանկացած իրավաբանական անձի, քանի որ Կառավարիչը Մասնակիցներին իրենց տվյալների վերաբերյալ հարցում անելու և ի պատասխան նրանցից տվյալներ ստանալու իր իրավունքն իրականացնում է Մասնակցին նույնականացնելու և Կառավարչի ու Մասնակցի հարաբերությունները լավագույնս կառավարելու նպատակով:

ԳԼՈՒԽ XII. ՊԱՏՎԻՐԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ

140. Կառավարիչը հետևյալ պարտականությունները պատվիրակել է Ֆոնդի զուտ ակտիվների հաշվարկն իրականացնողին.

- 1) Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկումը,
- 2) Փայերի հաշվարկային արժեքի, Տեղաբաշխման ու Հետգնման (Մարման) գների հաշվարկումը:

141. Կառավարիչը հետևյալ պարտականությունները պատվիրակել է Ռեեստրավարին.

- 1) Ֆոնդի փայերի թողարկման և մարման կազմակերպումը,
- 2) Մասնակիցներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը և այլ սպասարկման ծառայություններ,

3) Մասնակիցների ռեեստրի վարումը և Մասնակիցների սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերի տրամադրումը:

142. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման նպատակով իրականացվող գործողությունների իրականացումը Կառավարիչը պատվիրակել է Ռեեստրավարին: Վերջինս այն իրականացնում է Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացման կանոնակարգի» համաձայն:

143. Բացի Կանոնների 140-141-րդ կետերում նշված ծառայություններից, Կառավարիչը կարող է երրորդ անձանց պատվիրակել նաև հետևյալ գործառույթների կատարումը՝

- 1) Ֆոնդի կառավարման հետ կապված իրավաբանական գործառույթներ և հաշվապահական հաշվառման կազմակերպում,
- 2) կառավարչական այլ գործառույթներ, բացառությամբ՝ Ֆոնդերի ներդրումային որոշումների հետ կապված գործառույթների:

144. Կառավարիչը կարող է պատվիրակել կառավարման ենթակա Ֆոնդի ակտիվների առավելագույնը այնքան մասի կառավարումը, որի արդյունքում պատվիրակման պայմանագրի կնքման օրվա դրությամբ ընդհանուր պատվիրակված ակտիվների մասը էապես չի գերազանցի պատվիրակումից հետո Կառավարչի կողմից կառավարվող Ֆոնդի ակտիվների մասը: Ընդ որում՝ պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո Կառավարչի կառավարման ներքո գտնվող Ֆոնդի ակտիվների մասը որոշելու համար հաշվի է առնվում ոչ միայն պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո Կառավարչի կառավարման ներքո գտնվող Ֆոնդի ակտիվների մեծությունը, այլ նաև տվյալ Ֆոնդի ակտիվների հետևյալ որակական չափանիշները.

- 1) Ֆոնդի ներդրումային քաղաքականությունը, դրա ռիսկայնության աստիճանը,
- 2) Ֆոնդի ներդրումային նպատակներին հասնելու տեսանկյունից Ֆոնդի ակտիվների կարևորությունը,
- 3) Ֆոնդի ակտիվների ներդրումների աշխարհագրական և ոլորտային բաշխվածությունը,
- 4) Կառավարչի և կոնտրաբենտի գործունեության տարածաշրջանները,
- 5) Կառավարչի և կոնտրաբենտի կառուցվածքը, այդ թվում՝ արդյոք Կառավարիչը և կոնտրաբենտը ընդգրկվում են միևնույն խմբում, թե՛ ոչ:

145. Կառավարիչը Ֆոնդի կառավարման գործառույթների պատվիրակման նպատակով նախնական համաձայնություն ստանալու համար ԿԲ է ներկայացնում ԿԲ «Ներդրումային Ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանանները» Կանոնակարգ 10/13-ով նախատեսված փաստաթղթերը:

146. Ֆոնդի գործառույթների պատվիրակման պայմանագրի էական պայմանները, գործառույթների պատվիրակման պայմանները, պատվիրակման նախնական համաձայնության կարգն ու պատվիրակման հետ կապված այլ էական պայմանները

կարգավորվում են ԿԲ «Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանանները» Կանոնակարգ 10/13-ով:

ԳԼՈՒԽ XIII. ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

147. Պահառուն ի պահ է ընդունում, պահպանում և հաշվառում Ֆոնդի ակտիվները, իրականացնում է Ֆոնդի ակտիվների կառավարման հետ կապված գործարքների սպասարկումը և դրանց հիման վրա ակտիվների փոխանցումը:

148. Պահառուն կարող է օրենքով սահմանված իր գործառույթների մի մասը կամ Ֆոնդի ակտիվների մի մասի պահառության իր բոլոր գործառույթները պատվիրակել երրորդ անձին՝ վերջինիս հետ կնքված ենթապահառության պայմանագրին համապատասխան: Պահառուն Ֆոնդի ակտիվների պահառության նպատակով երրորդ անձանց ընտրությունը կատարում է պատշաճ ուսումնասիրությամբ՝ երրորդ անձի նկատմամբ վստահելիությունն ապահովելու նպատակով, հատկապես արտասահմանյան արժեթղթերի դեպքում կամ այն դեպքերում, երբ առավել արդյունավետ է երրորդ անձանց ծառայություններից օգտվելը: Նախքան պարտականությունների փոխանցումը և դրանից հետո՝ Պահառուն ստուգում է երրորդ անձի կազմակերպական, տեխնիկական մակարդակի, նրա ֆինանսական վիճակի և կարողության բավարարությունը պայմանագրում սահմանված պարտականությունների պատշաճ իրականացման համար:

149. Պահառուն պարտավոր է վերահսկել ենթապահառուի կողմից պատվիրակված գործառույթների պատշաճ իրականացումը և ֆոնդի մասնակիցների օրինական շահերի պահպանումը և պատասխանատվություն է կրում նրա գործողության կամ անգործության հետևանքով առաջացած վնասների համար: Այդ դեպքում նա հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում ենթապահառուի նկատմամբ:

ԳԼՈՒԽ XIV. ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

150. Ֆոնդի փայերի սեփականության իրավունքը և Մասնակիցների ու Կառավարչի համար Ֆոնդի փայերի տիրապետումից առաջացող իրավունքներն ու պարտականությունները ծագում են Ռեեստրում գրանցում կատարելու պահից (այսինքն՝ Մասնակիցների համար բացված Արժեթղթերի հաշիվներում փայերի գրանցման պահից):

151. Մասնակիցը, փայերով գործարքներ իրականացնելու մտադրության մասին հայտարարելով, համաձայնություն է տալիս իրեն վերաբերող տեղեկատվության (ներառյալ՝ անձնական տվյալները) օգտագործմանը ռեեստրի վարման անհրաժեշտության շրջանակներում: Մասնակիցն իրավունք ունի հիմնվել Ռեեստրում կատարված գրանցումների վրա՝ իր իրավունքներն իրականացնելիս և երրորդ անձանց նկատմամբ իր պարտականությունները կատարելիս:

152. Ռեեստրի վարումը և Ռեեստրավարի պարտականությունները հանդիսանում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և դրա հիման վրա ընդունված

ենթաօրենսդրական ակտերի կարգավորման առարկա: Ռեեստրում ներառված տեղեկատվությունը պահպանվում է էլեկտրոնային եղանակով:

153. Ռեեստրավարը Ռեեստրում գրանցումները կատարում է՝ հիմնվելով Ֆոնդի փայերով իրականացված գործառնությունների տեղեկատվության վրա: Գրանցումներ կարող են կատարվել նաև դատարանի որոշման կամ Ռեեստրավարի կողմից ընդունելի այլ հիմքերով:

154. Ռեեստրավարի կողմից գրանցումներ կատարելու համար ընդունված տեղեկատվությունն ու փաստաթղթերը պահպանվում են վերջինիս կողմից գրանցման կատարման պահից հետո առնվազն 10 տարի: Տեղեկատվությունը պահպանվում է փաստաթղթային տեսքով կամ այնպիսի ձևով, որը կարող է գրավոր վերարտադրվել:

ԳԼՈՒԽ XV. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ

155. Ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների և ծախսերի սպառիչ ցանկը ներկայացված է Կանոնների 76-րդ կետում:

156. Ֆոնդի ակտիվների հաշվին վճարվում է Կառավարչի պարգևավճարը, որը հաշվարկվում է տարեկան՝ Կանոնների 39-րդ կետով սահմանված դրույքաչափերով և հետևյալ սկզբունքով՝

$$ԿՊ_t^A = ՉԱԱ_{t-1}^A * 0.95\% * \frac{N}{365^*}$$

որտեղ՝

$ԿՊ_t^A$ -ն Գնահատման օրվա դրությամբ A դասի Կառավարչի պարգևավճարն է, $ՉԱԱ_{t-1}^A$ -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա A դասի Չուտ ակտիվների արժեքը,

N- ը հաշվեգրման օրերի քանակն է,

* նահանջ տարվա դեպքում՝ 366 օր,

$$ԿՊ_t^B = ՉԱԱ_{t-1}^B * 1.15\% * \frac{N}{365^*}$$

որտեղ՝

$ԿՊ_t^B$ -ն Գնահատման օրվա դրությամբ B դասի Կառավարչի պարգևավճարն է, $ՉԱԱ_{t-1}^B$ -ն Գնահատման օրվան նախորդող Գնահատման օրվա B դասի Չուտ ակտիվների արժեքը,

N -ը հաշվեգրման օրերի քանակն է,

* նահանջ տարվա դեպքում՝ 366 օր:

157. Յուրաքանչյուր դասի համար Կառավարչի պարգևավճարը հաշվեգրվում է օրական կտրվածքով և վճարվում ոչ ուշ, քան տվյալ ամսվան հաջորդող ամսվա տասներորդ աշխատանքային օրը: Եթե յուրաքանչյուր դասի համար Կառավարչի հաշվեգրված պարգևավճարը պարունակում է լումաներ, ապա վճարման ժամանակ լումաները

կլորացվում են դեպի ներքև՝ մեկ ՀՀ դրամի ճշտությամբ, և վճարվում է դասերի գծով հաշվեգրված ընդհանուր Կառավարման պարգևավճարը:

158. Պահառուի և Ռեեստրավարի պարգևավճարների դրույքաչափը սահմանվում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ տարեկան 0.15%-ի չափով: Պահառուի և Ռեեստրավարի պարգևավճարները վճարվում են Կառավարչի հաշվին: Եթե Պահառուի և Ռեեստրավարի հաշվեգրված պարգևավճարները պարունակում են լումաներ, ապա վճարման ժամանակ լումաները կլորացվում են դեպի ներքև՝ մեկ ՀՀ դրամի ճշտությամբ:

159. Ֆոնդն իր ակտիվների հաշվին վճարում է շահութահարկ, որի չափը սահմանվում է Կանոնների 162-րդ կետով:

ԳԼՈՒԽ XVI. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

160. Ֆոնդի հաշվապահական հաշվառումը կատարվում է, և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով՝

ԿԲ կողմից ընդունելի և միջազգային պրակտիկայում նման ֆոնդերի համար ընդունված սկզբունքներին համապատասխան, մասնավորապես՝ Ավստրիայի Հանրապետության կորպորատիվ կառավարման օրենսգրքի և Ներդրումային ֆոնդերի վերաբերյալ Ավստրիայի Հանրապետության օրենքի համաձայն:

161. Կանոնների 92-րդ կետի դրույթների առկայության դեպքում ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող օրական հաշվետվությունները մնում են անփոփոխ, այն է՝ Հաշվարկման օրվան նախորդող Գնահատման օրվա համար ուղարկվածը: Կանոնների 83-րդ կետով սահմանված դեպքերի ի հայտ գալու պարագայում ՀՀ Կենտրոնական բանկ են ներկայացվում ոչ էական սխալ պարունակող օրական հաշվետվությունները:

ԳԼՈՒԽ XVII. ՖՈՆԴԻ ՀԱՐԿՈՒՄԸ

162. ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ֆոնդն իր ակտիվների հաշվին վճարում է շահութահարկ՝ Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի 0.01%-ի չափով:

163. Հարկման նպատակով Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը (հարկվող շահույթը) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀԶԱԱ} = \text{ՀԶԱԱ}_1 + \text{ՀԶԱԱ}_2 + \dots + \text{ՀԶԱԱ}_n,$$

որտեղ՝

ՀԶԱԱ-ը Ֆոնդի՝ հարկվող շահույթի որոշման համար հաշվարկված զուտ ակտիվների արժեքն է,

ՀԶԱԱ_i -ը i-րդ օրվա դրությամբ Ֆոնդի՝ հարկվող շահույթի որոշման համար հաշվարկված զուտ ակտիվների արժեքն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ՀԶԱԱ}_i = (\text{ՉԱԱ}_i + \text{Ծ}_i) / \text{Պ},$$

որտեղ՝

ՋԱԱ_i -ը i-րդ օրվա Ֆոնդի զուտ ակտիվների արժեքն է,

Շ_i-ը տվյալ տարվա սկզբից մինչև i-րդ օրը ներառյալ Ֆոնդի ակտիվների հաշվին Ֆոնդի փայատերերին (բաժնետերերին) շահաբաժնի կամ նման այլ ձևով կատարված բաշխումների գումարն է,

Պ-ը տարվա ընթացքում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման պարբերականությունն է (տարվա ընթացքում Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկների քանակը): Ընդ որում, եթե Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվարկվում է օրական պարբերականությամբ, ապա Պ-ն հավասար է 365-ի, իսկ ոչ աշխատանքային օրերի շահութահարկի հաշվեգրվող գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում նախորդող աշխատանքային օրվա զուտ ակտիվների արժեքը:

ԳԼՈՒԽ XVIII. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

164. Ֆոնդի ակտիվների ներդրումից ձևավորված ողջ եկամտի հաշվին աճում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, ինչի արդյունքում աճում է Ֆոնդի Մասնակիցներին պատկանող փայերի արժեքը: Ֆոնդի շահույթի բաշխում շահաբաժինների տեսքով չի նախատեսվում:

165. Մասնակցի՝ Ֆոնդի եկամտի մասնաբաժինը արտացոլվում է Ֆոնդի համապատասխան դասի փայի հաշվարկային արժեքում:

166. Մասնակիցը կարող է ստանալ Ֆոնդի իր մասնաբաժինը՝ միայն փայերը մարելիս:

ԳԼՈՒԽ XIX. ՖՈՆԴԻ ՏԵՍԱԿԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ՄԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

167. Ֆոնդի տեսակի փոփոխումը և միացումը կատարվում է Կառավարչի Դիտորդ խորհրդի որոշման հիման վրա:

168. Որպես ստանդարտ պայմանագրային ֆոնդ՝ Ֆոնդը կարող է վերափոխվել մասնագիտացված պայմանագրային ֆոնդի:

169. Ֆոնդի տեսակի փոփոխումն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կանոնների փոփոխության միջոցով:

170. Եթե Ֆոնդը վերափոխվում է մասնագիտացված կամ փակ ֆոնդի, ապա Կանոնների փոփոխություններն ուժի մեջ են մտնում դրանց հրապարակումից առնվազն երեք ամիս հետո:

171. Ֆոնդի միացումն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված Կանոնների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու և այն ֆոնդի կանոնների մեջ կատարված համապատասխան փոփոխությունների գրանցման միջոցով, որին միացել են:

172. Ֆոնդը կարող է միանալ միայն Կառավարչի կողմից կառավարվող բաց պայմանագրային ստանդարտ ներդրումային ֆոնդի: Ֆոնդի միացման համար պահանջվում է ԿԲ խորհրդի նախնական համաձայնությունը:
173. Միացման դեպքում Ֆոնդի ակտիվները և պարտավորությունները փոխանցվում են այն ֆոնդին, որին միանում է Ֆոնդը՝ փոխանցման ակտին համապատասխան:
174. Ֆոնդի տեսակի փոփոխման և միացման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Կառավարչի հաշվին:
175. Կառավարիչը կարող է Ֆոնդի դադարեցման մասին որոշում կայացնել միայն այն դեպքում, երբ վերջինս չի փոխանցել Ֆոնդի կառավարումը այլ կառավարչի: Պահառուն կարող է որոշում ընդունել Ֆոնդի դադարեցման մասին, եթե Ֆոնդի կառավարումը փոխանցվել է Պահառուին, և Պահառուն չի փոխանցել Ֆոնդի կառավարումն այլ կառավարչի: Ֆոնդի դադարեցման մասին որոշում չկայացվելու դեպքում ԿԲ-ն պարտավոր է Պահառուի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Ֆոնդի դադարեցման պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան:
176. Կառավարչի կամ Պահառուի կողմից Ֆոնդը կարող է դադարեցվել միայն ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության առկայության դեպքում:
177. Ֆոնդի դադարեցման մասին ԿԲ նախնական համաձայնությունը ստանալուց հետո Կառավարիչը կամ Պահառուն անհապաղ օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները ներառող հայտարարություն է հրապարակում Ֆոնդի դադարեցման վերաբերյալ առնվազն 3000 տպաքանակով հանրապետական տարածում ունեցող մամուլում և իր հնտերնետային տնային էջում: Ֆոնդի դադարեցման հաղորդագրության հրապարակման հաջորդ օրվանից Ֆոնդի փայերի թողարկումն ու մարումը կասեցվում է:
178. Ֆոնդը դադարելիս Կառավարիչը կամ Պահառուն իրականացնում են Ֆոնդի ակտիվների իրացմանը, Ֆոնդի հանդեպ ունեցած պարտավորությունների հավաքագրմանը ու Ֆոնդի պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված միջոցառումներ:

ԳԼՈՒԽ XX. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

179. Կառավարչի փոփոխությունն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն:
180. Կառավարիչը կարող է այլ կառավարչի փոխանցել Ֆոնդի կառավարումը միայն Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագրի առկայության և ԿԲ խորհրդի կողմից «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով տրված նախնական համաձայնության առկայության դեպքում: Ֆոնդի կառավարման փոխանցման պայմանագիրն ուժի մեջ է մտնում այդ

պայմանագրում նշված ժամկետում, բայց ոչ շուտ, քան ԿԲ կողմից նախնական համաձայնությունը տրամադրելու օրը:

181. Նախքան Կանոնների 180-րդ կետով նախատեսված նախնական համաձայնությունը ստանալը՝ Կառավարիչը միջոցներ է ձեռնարկում Ֆոնդի կառավարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով այլ կառավարչի փոխանցելու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ XXI. ՊԱՀԱՌՈՒԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

182. Պահառուի փոփոխությունն իրականացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի համաձայն:

183. Ֆոնդի պահառության պայմանագիրը դադարելուց հետո Պահառուն պարտավոր է Ֆոնդի ակտիվները և դրանց վերաբերյալ փաստաթղթերը փոխանցել նոր պահառուին: «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Ֆոնդի պահառության պայմանագրի դադարեցման դեպքում Պահառուն պարտավոր է շարունակել կատարել ՀՀ օրենսդրությամբ, և Կանոններով սահմանված իր պարտականությունները՝ մինչև նոր պահառուի հետ պայմանագրի կնքումը և վերջինիս Ֆոնդի ակտիվների փոխանցումը:

ԳԼՈՒԽ XXII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

184. Կառավարչի և Ֆոնդի վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ Կառավարչի ինտերնետային կայքից՝ <https://www.c-quadrat-ampega.am/> և ԿԲ կայքից՝ <https://www.cba.am/>:

185. Կառավարչի կողմից տեղեկությունները հրապարակվում են սույն գլխով, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով, Կանոնակարգ 8/03-ով և ԿԲ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

186. Կառավարչի ինտերնետային կայքում առնվազն հրապարակվում են իր և Ֆոնդի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

- 1) ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և տարեկան հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացությունը,
- 2) Ֆոնդի ակտիվների կազմի և կառուցվածքի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն,
- 3) եկամտաբերության վերաբերյալ տեղեկատվություն,
- 4) Ֆոնդի մասնակիցներին շահութաբաժիններ վճարելու վերաբերյալ որոշումների մասին տեղեկատվություն, ինչպես նաև, Կառավարչի շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,
- 5) Կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը),

Կառավարչի կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության չափը:

187. Բացի այդ, Կառավարիչը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը հրապարակում է Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը, փայի հաշվարկային արժեքը և Մարման ու Տեղաբաշխման գները, ինչպես նաև, Ֆոնդի եկամտաբերության այլ ցուցանիշներ՝ համաձայն Կանոնակարգ 8/03-ի:
188. Կառավարիչը կարող է հրապարակել նաև Ֆոնդի վերաբերյալ այլ տեղեկություններ, որոնք ԿԲ նորմատիվ իրավական ակտով սահմանված առևտրային կամ այլ գաղտնիք կամ ծառայողական տեղեկատվություն չեն համարվում:

ԳԼՈՒԽ XXIII. ԿԱՆՈՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

189. Կանոնների փոփոխումն իրականացվում է սույն գլխով և «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:
190. Կանոնները փոփոխվում են Կառավարչի Դիտորդ խորհրդի որոշման հիման վրա:
191. Կանոնների փոփոխությունները ԿԲ-ում գրանցվելուց հետո հրապարակվում են Կառավարչի ինտերնետային կայքում:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում ԿԲ-ում գրանցվելուց հետո, եթե փոփոխություններում դրանց ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ սահմանված չէ: